Ironically, when Prime Minister Vratsian protested this armed incursion, Legran apologized and called it a misunderstanding. The decision was made to send an Armenian unit to push the intruders back. But the few hundred Armenian soldiers, confronting an aggressive army of 6,000, surrendered and joined the revolutionaries. That was the point of no return. Legran was instructed to take immediate action to effect Sovietization. On November 30, he presented Vratsian with an ultimatum demanding immediate acceptance of the Soviet regime.

Under tremendous pressure from both sides, a meeting was convened in Yerevan with the ARF parliamentary faction, current and former cabinet members, the ARF Bureau, and some ARF leaders participating. The majority was in favor of unequivocal surrender to the Soviets in order to avoid total Turkish occupation and imminent massacres. Some ARFers suggested that an entente with the Turks was possible and that they might even help the Armenians defend the country against the Bolsheviks. Others wanted to continue fighting, arguing that since the Bolsheviks would not defend the republic against the Turks, they could only exacerbate the internal turmoil and weaken the country. The proponents of carrying on the fight did not know how true their prediction was. Months after

[47] Harutyunyan, *Hay Bolshevikneri*, p. 18.

Sovietization, ArmRevKom member Askanaz Mravian would inform Alexander Bekzadian, Commissar for Foreign Affairs in Armenia, that "Lenin says Russia cannot and will not fight the Turks, especially because of Kars which he believes to be a Turkish city. 'We are temporarily sacrificing the interests of Armenian workers to the interests of international revolution,' says Lenin. 'We do not intend to fight against anyone for the sake of Armenia, especially against Kemal'."[48]

It was during the meeting in Yerevan that a call came through from Alexander Khatisian who was negotiating with the Turks in Alexandrapol. He reported that they were refusing any compromise and insisting on the harsh terms they had offered. The picture was clear. To agree with the Turks was tantamount to creating an amputated state wholly dependent on Turkey. Surrender to the Soviets was the only option. Vratsian telegraphed the decision to Khatisian.[49] The government resigned. A transitional government was formed with ARF leaders Dro and Hambartsum Terterian participating. The ARF Bureau decided to leave the country to ease the process of transition.

And the Sovietization - Negotiations began on December 1. A draft accord was prepared with the approval of the ARF. The act of Sovietization was signed at 2:00 PM on December 2, and at 6:00 PM, the government

[48] *Khavarum*, p. 17.

[49] For the content of the telegram, see Ghazakhetsian, *Hayastani Hanrapetutiun*, p. 381. Reference is made to NAA Yerevan, fund 199, list 1, file 248, no. 1.

was turned over to Dro as Commissar-in-Chief and Minister of War. Silin, the Soviet representative, was appointed Commissar of Armenia. Dro informed Khatisian of the collapse of the government and left it to the discretion of the delegation to sign or reject a treaty with the Turks. Under Turkish pressure, Khatisian signed the Treaty of Alexandrapol in the wee hours of December 3 on behalf of a government that had already resigned. One provision of the treaty called for its ratification by the Armenian Parliament and the Turkish Grand National Assembly. That condition was never met, yet Soviet Armenian historians used the treaty against Dashnaktsutiun.

Significantly, the text of the treaty is included in the *Hoktemberian sotsialistakan mets revolutsian yev sovetakan ishkhanutian haghtanake Hayastanum: Pastatghteri yev niuteri zhoghovatsu*, collection of documents (1960), but missing is the Act of Sovietization of Armenia, which was published in the earlier, Russian version of the same collection. There was no need to show that, down to the last moment of agony, the ARF leaders had labored to secure conditions to benefit the future of Armenia, including the continuation of an independent Armenian state under the name of the Independent Socialist Soviet Republic of Armenia; the Armenian Republic's retention of the entire former Yerevan Gubernia and a part of Kars, the region of Zangezur and parts of Karabagh, Kazakh and the former Tiflis Gubernia, which had belonged to the Armenian Republic until September 28, 1920; and the provision of military aid by the Red Army to defend the republic against

Turkey and push the Turks beyond the border before they could invade. There was no need to expose the fact that none of these conditions were met: they were obviously violated by the Soviets.

Evidence shows that the Sovietization of Armenia was realized not at the behest of Moscow but because of the zeal and greed of the Armenian Bolsheviks for their personal gain, for the opportunity to rule the country, and for the sake of the victory of the Communist ideology and internationalism which they had so ardently espoused. Listen to the words of Leonid Krasin, a high-ranking Soviet diplomat in Paris, in response to Avetis Aharonian who had protested to him against the invasion of the Red Army on April 2, 1921, following the brief period of independence after the uprising of February 1921:

> We have no special interest in Armenia, neither economic nor political. Nor is Armenia valid as a mediator in international relations. You do not have a network of railways. You do not have Baku or Batum. We will never let go of Baku, nor for that matter of Azerbaijan, but Armenia is different. We do not wish to spread our territorial dominion; we are not interested in lands; we have enough.... As to the regime, the Armenian Bolsheviks have convinced us that the Armenian nation aspires to Communism. If that were not true, we would have been against imposing our regime over you.... We need an independent Armenia to separate Azerbaijan from Turkey, the vaster the better. Don't let our friendly relations with Turkey fool you. That relationship is temporary. And if Turkey manages to expand so as to share a common border with Azerbaijan, it will constantly incite the

Azerbaijanis against us.[50]

Of course, this general Soviet policy vis-à-vis Armenia was influenced by another gathering threat that changed the course of action, and that was Turkey's dangerous advance toward and aspiration to reach Azerbaijan. Mustafa Kemal was pursuing the realization of the Young Turk ideology of Pan-Turanism. An Armenia totally paralyzed by internal turmoil was incapable of defending its independence; indeed, it was on the verge of becoming a dismembered state totally dependent on Turkey. Stalin's telegram to Lenin, dated November 15, 1920, explained: "It is possible that in regard to Armenia we are already late, that is, Kemal will eat it and finish it sooner than we [can] get there."[51]

[50] Aharonian, *Sardarabadits*, p. 122.

[51] Harutyunyan, *Karsi marze*, p. 146, fn. 344.

The Resonance of the Bolshevik Mindset in Armenia

Acrimony against Dashnaktsutiun continued throughout the entire period of Soviet rule in Armenia. It dictated the formation of public opinion and the general mindset within the republic. It dictated the Soviet Armenian governments' policies vis-à-vis Diasporan Armenians which resonated with aversion to and rejection of the Diasporan masses and organizations sympathetic to the ARF.

Soviet Armenian historians, with their partisan approach, distorted the history of that period, because as Lendroush Khourshoudian explains, "It is clear that the historiography of Bolsheviks who seized the power resorting to perfidy and violence, should be based on deception and unacceptable concepts."[52]

[52] Lendroush Khourshoudian (1927-1999), Soviet Armenian historian, was one of the few or one of the first ones, who tried to free himself from the restrains of traditional Soviet historiography and judge the past from a neutral vantage point, even if that entailed major digression from the direction and principles he had come

Furthermore, Soviet Armenian historians tried to fabricate justifications for the deeds and conduct of Armenian Bolsheviks, who had denied the Armenian national ideology and embraced internationalism, who handed over the country to the Communist leaders of Moscow and served as their lacqueys all along. They were made heroes in Soviet Armenia. Their statues were erected throughout the country,"[53] and streets and villages were named after them.

Hatred against Dashnaktsutiun was successfully instilled in generations. And when Soviet Armenians needed a source of inspiration and examples to follow, say to encourage the defense of Artsakh during the Karabagh conflict, the chosen heroes of the Armenian national struggle of the past were those who, at one point in their tumultuous and difficult life, had held grievances against Dashnaktsutiun and expressed a foul word or two against it. However, since the number of these heroes were not enough, they dug out others too, extoled their exploits without mentioning the organization behind them.

And now, almost three decades into independence, the deep-rooted mentality is not completely eradicated yet neither in Armenia nor within the expatriates in the Diaspora. It takes a conscious effort to do that for the

to adopt before. He made the above statement in the foreword he wrote to my book. See *Hayastane HoHiDa-Bolshevik haraberutiunneri volortum, 1917–1921* (Armenia in the sphere of ARF–Bolshevik relations, 1917–1921), Yerevan, 1997, p. xiv.

[53] Some of these statues, like that of Lenin, Stalin, Mashadi Azizbekov, Ghukas Ghukasian, and others, were brought down in the 1990s.

sake of unity among all the elements of the Armenian nation, and for the sake of an unbiased national history yet to be written of the past, of the national struggle for freedom հայ ազատագրական պայքար, of the Independent Republic of Armenia, and of the Soviet period. We need to write that history, to judge the past objectively, to reveal past mistakes and shortcomings and learn from them, to identify successes and emulate them: this is the road to success.

Map 1. The Caucasian front, 1914-1917

(Richard G. Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918*, p. 65)

Քարտէզ 1. Վասպուրական նահանգը 1914-1917

Քարտէս 2. Թիւրք դարձեալ ձեռնարկ, Փետրուար-Մայիս 1918

Map 2. The Turkish offensive, February-May 1918

(Richard G. Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918*, p. 136)

Map 3. The Republic of Armenia, June 1919

(Richard G. Hovannisian, *The Republic of Armenia, The First Year, 1918-1919*, p. 474)

Ընկերատիպական հետաքրքրական քարտեզ 1914-ի Հայաստանի վերաբերյալ

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՀԱՅԿ
ՊԵՐՍԻԱ
ՎԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ
ԿԱՐՍ
ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՐԵՎԱՆ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԵՐՍԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆ

Քարտէսը ցոյց կու տայ Հայկական Սփիւռքի ներկայ տարածումը

Map 5. Armenian losses by the treaties of Alexandropol, Moscow, and Kars, 1920-1921

(Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, volume 4, p. 397)

ՀՅԴ-ԲՈԼՇԵՒԻԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(1918-1920)

ՎՃՌԱՀԱՏՈՂ ԱԶԴԱԿ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՃԱՏԵԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Ռուբինա Փիրումեան

Մուտք

Մօտենում էր հայոց պետականութեան վերընձիւղման եւ Անկախ Հայաստանի ծննդեան հարիւրամեակը (1918-2018): Հայաստանի ժամանակի իշխանութիւնը յայտարարել էր, որ հարիւրամեակը նշող տօնակատարութիւններ է նախաձեռնելու: Սպասւում էր, որ պատշաճը պիտի հատուցուի հայ ժողովրդի նորագոյն պատմութեան այս անկիւնադարձային հանգրուանը յիշատակող: Բայցեւայնպէս, հակառակ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին նախորդող տարիների պատրաստութեան ու ոգեւորութեան, շատ բան չէր կատարւում. իշխանութեան նշանակած յատուկ յանձնաժողովից ձայն դուրս չէր գալիս: Փոխարէնը, լրատուամիջոցները, ինչպէս եւ կուսակցական օրգանները եւ սոցիալական մեդեայի հարթակները լեցուն էին հակասական կարծիքներով յօդուածներ, հարցազրոյցներ, յայտարարութիւններ: Փորձ էր կատարւում հանրային կարծիք ձեւաւորել հանդէպ «Առաջին Հանրապետութեան»—այս պիտակն էր դրուած 1918-ին հիմնադրուած Ազատ եւ Անկախ Հայաստանի վրայ՝ Սովետական Հայաստանը համարելով երկրորդը, որքան էլ որ վիճելի է վերջինիս

ունեցած «ազատ» եւ «անկախ» կարգավիճակը:

Տիրող իրարամերժ կամ մեղմ ասած հակադարձական մթնոլորտում գլուխ էր բարձրացրել հակա-դաշնակցական աւանդական վերաբերմունքը, եւ միտումնաւոր կերպով ու հիմնուած խորհրդահայ խեղաթիւրուած պատմութեան սերմանած գիտելիքների վրայ, փորձ էր կատարւում, ա. նսեմացնելու Դաշնակցութեան եւ անհատ դաշնակցական գործիչների դերը անկախ հանրապետութեան ստեղծման մէջ եւ նրա կեանքում, բ. արդարացնելու հայ բոլշեւիկների կործանիչ գործունէութիւնը այդ տարիներին, գ. ծածկելու, սքօղելու Հայաստանի խորհրդայնացումից առաջ եւ յետոյ հայ բոլշեւիկների կատարած ոճիրները, մի տեսակ փնտռտուք՝ «մեղմացուցիչ դէպք յանցանաց»ի, դ. նորից նոր վեր հանելու Ռուսաստանը՝ որպէս Հայաստանի եւ հայ ազգի փրկչի «խորհուրդը»: Լսում էի այս ամէնը, որոնք գալիս էին ժխտելու հաւատս, ստացածս դաստիարակութիւնը: Եւ սրտիցս արիւն էր կաթում:

Միշտ սիրել եմ պատմութիւնը, նրանով հանդերձ, որ գիտական ուսումնասիրութեանս դաշտը եղել է գրականութիւնը, ցեղասպանութեան գրականութիւնը: Փոքր տարիքից դաստիարակուել եմ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականով: Այս վսեմ գաղափարը՝ գերագոյն լուծումը Հայկական Հարցի, իմ սերնդին էր փոխանցուել Հայաստանի խորհրդայնացումից յետոյ Իրան ապաստանած եւ Իրանում դաստիարակի դեր ստանձնած ու իրենց անցեալով՝ անկախ Հայաստանի կերտման ու պահպանման գործում ջանք չխնայած, իրենց վեհանձնութեամբ ու մեծութեամբ մեզ օրինակ

դարձած մտաւորականները, քաղաքական գործիչները, բանակայինները, ֆիդայիներն ու խմբապետները: Ներշնչուած էի: Հպարտանում էի նրանց կեանքով ու գործով ու ցաւ էի զգում, թեւաթափ էի լինում երբ կարդում էի ապազգային բոլշեւիկ հայի դաւաճան սադրանքների մասին: Ինչպէ՞ս կարող էր հայ մարդը ամէն գնով ու ամէն միջոցներով աշխատել տապալելու ի՛ր երկրի անկախութիւնը, դաւակցել Հայաստանի հողային տարածքների թուրքին ու թաթարին նուիրելու մեղք գործին եւ մնացորդացը երկու ձեռքով Ռուսաստանի գիրկը նետել:

Տարիներ անց, երբ Ամերիկա փոխադրուելով UCLA -ի Միջին Արեւելեան Լեզուների ու Մշակոյթների բաժանմունքի հայագիտական ճիւղին էի հետեւում, կարողացայ նաեւ նոյն համալսարանի պատմութեան ամբիոնի, այսինքն՝ Փրոֆեսոր Ռիչարդ Յովհաննիսեանի մատուցած հայոց պատմութեան դասընթացներին եւս մասնակցել: Դոկտորականս ստանալուց յետոյ, եթէ առաջին գիրքս գրական ուսումնասիրութիւններիս արդիւնք՝ աւարտաճառս էր, երկրորդը մարմնաւորում էր հայոց պետականութեան վերստեղծման՝ Ազատ ու Անկախ Հայաստանի պատմութեան նկատմամբ ունեցած սէրս ու ակնածանքս եւ կրածս վիրաւորանքը ի տես նրա կործանմանը սատարած հայ մարդու: «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, 1917-1921» աշխատութիւնս լոյս տեսաւ 1997-ին Երեւանում, եւ մանաւանդ Համալսարանի հրատարակութեամբ եւ պատմութեան ամբիոնի երաշխաւորութեամբ:

Ինձ թւում էր, որ պարտքս կատարել եմ: Ինձ թւում էր, որ սովետական մտածելակերպը աստիճանաբար

տեղի կտայ անկախացած Հայաստանում ու դրան կը փոխարինի անցեալը դատելու աւելի առողջ եւ անկողմնակալ մօտեցում: Սխալուել էի: Սովետական տրամաբանութիւնն ու աշխարհընկալումը շարունակւում էր, եւ աւելի շեշտուած կերպով դրսեւորւում յատկապէս Հայաստանի անկախութեան հարիւրամեակին ընդառաջ:

Այս հակասական ու ինձ համար մտահոգիչ մթնոլորտում, 2017-ի գարնան, Կարս Ակադեմիայի[54] տնօրէն Ընկ. Վազգէն Մատենլեանը դիմեց ինձ՝ մէկ երկու դասախօսութեամբ հանդէս գալու, նիւթի ընտրութիւնը ինձ թողնելով: Նիւթը մտովին պատկերացրի անմիջապէս: Մտածելու կարիք չկար: Երկու անգամ, երկուական ժամով պիտի խօսեմ անկախութեան շրջանի Դաշնակցութիւն-Բոլշեւիկ յարաբերութիւնների մասին: Պիտի խօսեմ թէ ինչպէս հայ բոլշեւիկները փութացին տապալել Հայաստանի անկախութիւնը եւ թէ ինչպէս յետագայում այդ շրջանի պատմութիւնը խեղաթիւրելով եւ Դաշն կցութիւնը իբրեւ հայ ժողովրդի թիւ մէկ թշնամի ներկայացնելով, Խորհրդային Հայաստանում հասակ նետող սերունդներ դաստիարակեցին:

Սկսեցի պատրաստութիւնս՝ հիմնուած տարիներ առաջ հրատարակուած գրքիս վրայ, միաժամանակ օգտագործելով Հայաստանում կատարուող նոր ուսումնասիրութիւններ եւ նոր հրատարակուած

[54] Տես այս գրութեան անգլերէն տարբերակի թիւ 1 ծանօթագրութիւնը: Այդ տարբերակը օժտուած է տողատակի ծանօթագրութիւններով, որոնք, կրկնութիւնից խուսափելու համար, զեղծուած են հայերէնում եւ վերջում բերուած է օգտագործուած աղբիւրների ցանկը միայն:

արխիւային նիւթեր: Սա կլինէր իմ պատասխանը ի դէմս խեղաթիւրուած պատմութեան եւ հրապարակ իջած հակա-դաշնակցական քարոզչութեան: Այսպիսով ես էլ իմ համեստ լուման էի բերում աւելացնելու վերջերս Հայաստանում ծաւալուած փոքր բայց հզօր մտաւորական փաղանգի գործին, երիտասարդ պատմաբաններ, ովքեր սովետական դաստիարակութիւնից ու Դաշնակցութեան նկատմամբ կանխակալ վերաբերմունքից հրաժարուած, ուղղամիտ եւ անաչառ քննում ու դատում են «Առաջին Հանրապետութեան» պատմութիւնը՝ հանրագումարի բերելու այս շատ ծեծուած ու երբեք չհամակարգուած թեման:

Դասախօսութիւնները կայացան 2017-ի Հոկտեմբերին: «Ասպարէզ»ում հրատարակուեց բնագրի մի տարբերակը: Նիւթը ընդլայնելով ու աւելի խորացնելով ներկայացրի 2018-ի ընթացքում հարիւրամեակի առիթով Սփիւռքում եւ Հայաստանում կազմակերպուած մի քանի գիտաժողովներում:

Այս հանգրուանին, Հարիւրամեակի տարին լրանալու սեմին, ներկայ գրքոյկի հրատարակութեամբ, ցանկանում եմ լրացնել Հայաստանի անկախութեան վերածննդի հարիւրամեակի առիթով կատարածս աշխատանքը: Ցանկանում եմ այս դիւրին ընթեռնելի, երկլեզու (բայց ո՛չ անպայման յար եւ նման բովանդակութեամբ) գրքոյկով հասնել աշակերտութեան եւ երիտասարդութեան, երեւի մեծ մասամբ հայ, տալու նրանց փաստացի տարրական գիտելիք, օգնելու նրանց կարողանալ մերժելու համար ճշմարտութեան քօղարկումն ու էժանագին հակա-քարոզչութիւնը:

Այս գրքոյկում քննարկելու ենք ՀՅԴ-Բոլշեւիկ յարաբերութիւնները, նախ՝ մինչեւ Հայաստանի անկախութիւն. ապա՝ պիտի տեսնենք Հայաստանի կառավարութիւնների կատարած փորձերը մօտենալու եւ բանակցելու բոլշեւիկ Ռուսաստանի հետ, փորձեր՝ որոնք շարունակաբար խոչընդոտուում էին հայ անհատ բոլշեւիկների եւ Մոսկուայում գործող Հայկական Գործերի Կոմիսարիատի կողմից, մինչեւ 1920-ի ամռանը վերջապէս տեղի ունեցած պաշտօնական բանակցութիւնները: Պիտի խօսենք անկախ Հայաստանի վերջին ամիսների իրադարձութիւնների մասին, որ ինչպէս Սիմոն Վրացեանն է բնութագրել, տրորուում էր «Բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ» եւ պիտի վերջացնենք Հայաստանի խորհրդայնացումով: Որպէս եզրակացութիւն, պիտի փորձենք ընկալել եօթանասուն տարիների խորհրդային պատմագրութիւնը եւ դրա մշակած եւ սերունդների մէջ բուն դրած մտածելակերպն ու աշխարհիմացութիւնը, որ վերանկախացած Հայաստանում, նոյնիսկ, լիովին արմատախիլ չի եղել:

Գլենդէյլ, Քալիֆորնիա,
Նոյեմբեր, 2018

ՄԻՆՉԵՒ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

Երկար տարիներ հայ ազատագրական պայքարը եւ ֆիդայական շարժումը Օսմանեան Կայսրութեան տարածքում առաջնորդելուց յետոյ, Օսմանեան իշխանութեան եւ ցարական կառավարութեան հետապնդումներին եւ հալածանքներին ենթարկուած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 1907-ի իր Չորրորդ Ընդհանուր ժողովում հաստատեց Երրորդ Ընդհանուր ժողովի (1904) արդէն բանաձեւուած որոշումը՝ հետապնդելու «Օսմանեան Հայաստանի պատմական Դատը», բայց եւ իր վրայ առնելու «Կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան գործը»: Ուրեմն, հետապնդել հայ ժողովրդի բարօրութիւնը, ապահովութիւնն ու անվտանգութիւնը երկու ճակատի վրայ՝ «երկու դատերն էլ առաջ մղել Դաշնակցութեան դրօշի տակ»:

Համառուսական յեղափոխութեանը ընդառաջ - 1905-ից արդէն Դաշնակցութիւնը իր սահմանափակ ուժերով համառուսական յեղափոխական շարժման մէջ էր մտել: Սահմանափակ, որովհետեւ Արեւմտահայաստանի ինքնապաշտպանութեան գործողութիւնները, Եւրո-

պայում տարուող քաղաքական, դիւանագիտական գործունէութիւնը, Կովկասում բռնկուած հայ թաթարական կռիւները, որ գիտենք «բաժնէ՛, որ տիրես» բնաբանով՝ հայերի ուժը թուլացնելու ցարական քաղաքականութեան արդիւնքն էր, մեծ մարտահրաւէրի առջեւ էին կանգնեցրել Դաշնակցութեանը: Նման մթնոլորտի ու պայմանների մէջ, Դաշնակցութիւնը ոգեւորութեամբ եւ մեծ ակնկալիքներով ընդունեց 1917 Մարտի 8-ին (հին տոմարով Փետրուար 22) Ռուսական Յեղափոխութիւնը եւ շտապեց կապեր հաստատել Պետրոգրադի ժամանակաւոր Կառավարութեան հետ: Ժամանակաւոր Կառավարութեան ղեկավար էր ընտրուած ռուս սահմանադրական-դեմոկրատ (Կադեթ), իշխան Գէորգի Լվովը, որին յաջորդեց Էս.Էռ-ական Ալեքսանդր Կերենսկին:

Պիտի շեշտել, որ Դաշնակցութիւնը այդ ժամանակ Արեւելեան Հայաստանի կամ արեւելահայութեան ապագան Ռուսաստանից անկախ չէր պատկերացնում եւ նոյն տարուայ Հոկտեմբեր 11-ին Թիֆլիսում գումարուած Արեւելահայոց Համագումարը—որտեղ ճնշիչ մեծամասնութիւն էր Դաշնակցութիւնը—եւ նրանից բխած Ազգային Խորհուրդը, նոյն տրամադրութիւնն էին արտայայտում: Ազգային Խորհուրդին մաս էին կազմում Դաշնակցութիւն (6), ժողովրդական (2), Սոցիալ-Դեմոկրատ, Մենշեւիկ (2), Սոցիալ-Յեղափոխական, Էս.Էռ (2) կուսակցութիւնները եւ 3 չէզոքներ: Խորհրդի նախագահ էր ընտրուել Աւետիս Ահարոնեանը:

Այդ օրերին հայ բոլշեւիկները դեռ թիւ չէին կազմում Կովկասում, այդու եւ առանձին միաւոր չէին եւ ղեկավարում էին Ռուսաստանի Սոցիալ-

Դեմոկրատ, Բոլշեւիկ կուսակցութեան Թիֆլիսի Կոմիտէի կողմից, որի քարտուղարն էր Անաստաս Միկոյեանը: Այդուամենայնիւ, հայ բոլշեւիկները բոյկոտի էին ենթարկել համագումարը՝ այն որակելով, «Խոշոր բուրժուազիայի կառքին լծուած եւ ռէաքսիոն հոգեւորականներից դեռեւս չխզուած մանր բուրժուազիայի նացիոնալիստական հնարք»: Համագործակցել այդ տարրերի հետ նշանակում էր, «դաւաճանել ինտեռնացիոնալիստական պռոլետարական տակտիկային ու ռեւոլուցիային ի հաճոյս հայ իմպեռիալիստական մանր բուրժուազիայի դաշնակցութեան պարտիայի գլխաւորութեամբ» (ուշադրութիւն դարձրէք, թէ քանի ռուսերէն բառ է գործածուած այս երկու նախադասութիւնների մէջ): Այս դիրքորոշումը երբեք չփոխուեց խոչընդոտելով ամէն ջանք յետագայ յարաբերութիւնների մէջ:

Տիրող ոգեւորութեան մէջ Դաշնակցութիւնը ժամանակաւոր Կառավարութեան էր ներկայացնում Կովկասի սահմանային բաժանումների նախագիծը ըստ ազգային բնակչութիւնների կենտրոնացման: Հայ ազգային շահերը ժամանակաւոր Կառավարութեան մօտ առաջ տանելու համար, Պետրոգրադում աշխատանք էին տանում Բժ. Յակոբ Զաւրեանը (Զաւրիեւ), եւ Լիպարիտ Նազարեանցը: Այնտեղ էր նաեւ Ռոստոմը: Նրանց ջանքերով հնարաւոր եղաւ Կովկասից առանձնացնել Ռուսների գրաւած Թրքահայաստանի հողերը ու 1917-ի Ապրիլ 26-ի (Մայիս 9) հրամանագրով դրանց տալ յատուկ կարգավիճակ: Թրքահայաստանի կոմիսար նշանակուեց Զօր. Աւերիանովը եւ օգնական՝ Զաւրեանը:

Ժամանակաւոր Կառավարութիւնը համաձայնուել

էր նաեւ եւրոպական ճակատներում կռուող հայ զինուորներին հաւաքել եւ թուրքական ճակատ ուղարկել: Բայց դրանք մինչեւ Թիֆլիս հասան: Թիֆլիս-Բաքու գիծը թաթարների հսկողութեան տակ լինելով փոխադրութիւնը այդտեղ կանգ առաւ: Իսկ Անդրկովկասում, Դաշնակցութեան համագործակցութիւնը ժամանակաւոր կառավարութիւնը ներկայացնող Օզակոմի հետ էր, որին անդամ էր Պապաջանովը՝ ազգութեամբ հայ, բայց ներառուած էր որպէս Կադեթ կուսակցութեան անդամ: Ի հարկէ, Օզակոմի կարեւոր պաշտօնները վրացիներն ու թաթարներն էին զբաղեցնում:

Դաշնակցութիւնը, որ մինչեւ Առաջին Աշխարհամարտ հետապնդում էր իրագործել Թրքահայաստանի ներքին անկախութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, դաշնակցային (Ֆեդերաթիւ) կապով կապուած, այլեւս գիտակցում էր, որ Օսմանեան կայսրութեան մէջ Հայաստան չի կարող գոյութիւն ունենալ եւ Ազատ Հայաստանի գաղափարն էր պաշտպանում, այսինքն՝ Արեւմտահայաստանը՝ 6 Վիլայեթներ եւ Կիլիկիա: Բայց եւ այնպէս, ինչպէս Ռոստոմը ինքն էր արտայայտուել հայ գործիչները կարեւոր ներկայութիւն չէին Եւրոպայում, ուր արդէն հաշտութեան բանակցութիւններն էին ընթանում:

Բոլշեւիկեան յեղաշրջման ստեղծած շփոթի մթնոլորտում - ժամանակաւոր կառավարութիւնը չկարողացաւ երկրի ղեկը պահել: 1917-ի Նոյեմբեր 7-ին տեղի ունեցաւ բոլշեւիկեան յեղաշրջումը եւ իշխանութիւնը անցաւ բոլշեւիկներին: Ընտրուեց Սովնարկոմը, ժողովրդական կոմիսարների խորհուրդը՝ Վլադիմիր

Լենինի գլխաւորութեամբ: Լեւ Տրոցկին դարձաւ Արտաքին Գործերի Կոմիսար իսկ Իոսիֆ Ստալինը՝ Ազգութիւնների:

Մեծամասնութիւն կազմող հակա-բոլշեւիկ զանգուածի յոյսը Համառուսական Սահմանադիր ժողովն էր, ուր առաջին անգամ ժողովրդական քուէով պիտի որոշուէր Ռուսաստանի ապագայ վարչածեւը: Յուսով էր նաեւ հայ պատուիրակութիւնը, որ Ռոստոմի գլխաւորութեամբ եկել էր Հայկական Հարցին լուծում գտնելու: 1918-ի Յունուար 18-ին Պետրոգրադում բացուեց ժողովը: Ժողովականների պատկերը, սակայն, մեծամասնութեամբ հակա-բոլշեւիկ, անընդունելի էր բոլշեւիկ իշխանութեան համար եւ ուրեմն ուժի պարտադրանքով եւ բռնութեամբ կարողացաւ ժողովը ցրել: Ուժի գործադրումը շարունակուեց անխնայ մաքրագործելու ամէն տեսակի հակադիր ուժ եւ հակա-բոլշեւիկ տրամադրութիւն:

Բոլշեւիկները իրենց իշխանութիւնը սկսեցին փայլուն յայտարարութիւններով, որոնցից շատերը հակասում էին իրար եւ անգործադրելի մնացին: «Ռուսաստանի ժողովուրդների իրաւունքների դեկլառացիան» ազատութիւն էր խոստանում բոլորին: Նախապէս Լենինն յայտարարել էր, որ եթէ իրենք գործի գլուխ գան պիտի ասեն, «Գերմանիա՛, զօրքերդ դո՛ւրս Լեհաստանից: Ռուսաստա՛ն, զօրքերդ դո՛ւրս Հայաստանից»: Իսկ Ստալինը որպէս ազգութիւնների կոմիսար արդէն յայտարարում էր, «Յեղափոխութեան այս փուլի մէջ, սահմանամերձ շրջանների պահանջը՝ բաժանուելու Ռուսաստանից, միանգամայն հակայեղափոխական է»: 1917-ի Դեկտեմբեր 31-ին մէկ այլ հրամանագրով, Թրքահայաստանը յայտարարուում

էր ինքնավար. բայց նոյն հրամանագրով ռուսական զօրքը դուրս էր բերւում կովկասեան ճակատից: Այդ ինքնավարութիւնը ինչպէ՞ս պիտի պահուէր կարեւոր չէր: Լենինը տառապած ռուս զինուորի սիրտն էր շահում: Ի հակասութիւն ինքնավարութեան հրամանագրի Սովնարկոմը կոչ էր անում Ռուսաստանի եւ Արեւելքի մահմեդականներին միանալ շարժմանը եւ դատապարտում էր Թուրքիան մասնատելու բոլոր դաշնագրերը:

Բրեստ Լիտովսկի չարաբաստիկ համաձայնագիրը - Այս քաղաքական շփոթի մթնոլորտում, Լենինը իր օրակարգն ունէր՝ ամէն գնով Ռուսաստանը դուրս քաշել պատերազմից: Եւ հակառակ Դաշնակիցների զգուշացմանը՝ առանձինն հաշտութեան բանակցութիւնների չգնալ, նրա ներկայացուցիչները Բրեստ Լիտովսկում բանակցում էին Քառեակ Զինակցութեան հետ: Սոցիալ-Յեղափոխական, Էս.Էռ, Վահան Մինախորեանի կարծիքով, Հայկական Հարցի վերաբերեալ Բրեստ Լիտովսկում ցուցաբերած անտարբեր կեցուածքը բացասական տպաւորութիւն էր թողել Եւրոպայում եւ Թրքահայաստանի ինքնավարութեան հռչակագիրը միայն այդ տպաւորութիւնը ցրելու համար էր: Իրականութեան մէջ Լենինի համար կարեւոր չէր թէ ո՞վ կլինի տէրը Թրքահայաստանի: Նպատակը Թուրքիայում եւ ապա ամենուրեք Բոլշեւիզմի տարածումն ու տիրապետութիւնն էր: Կարեւոր էր նաեւ Դաշնակութեան դերը Թրքահայաստանում չէզոքացնել եւ այնտեղ բոշեւիկեան բջիջներ ստեղծել: Նոյն ժամանակ, արեւմտահայ բոլշեւիկ գործիչ Գուրգէն Հայկունին զեկուցում էր Լենինին, որ արեւմտահայ

բանուորն ու գիւղացին խորհրդային իշխանութեան են սպասում:

Այնուամենայնիւ, Դաշնակցութիւնը յոյսով էր նայում այս բանակցութիւններին: Լեհաստանը ազատագրւում էր Գերմանիայից նոյն օրինակը պիտի կիրարկուէր նաեւ Թրքահայաստանի պարագայում: Ցատկանշական է, որ ռուս պատուիրակութեան մէջ էր առնուել նաեւ Վահան Տէրեանը, որ Ազգութիւնների Կոմիսարիատի մէջ Հայկական Գործերի Կոմիսարիատի փոխ-նախագահն էր: Տէրեանը դիմել էր Լիպարիտ Նազարեանցին եւ տեղեկութիւններ ուզել: Դրանից ոգեւորուած ուրեմն, Նազարեանցը, Ռոստոմը, Զօր. Լեւոն Տիգրանեանը, պատմաբան Նիկողայոս Ադոնցը միացել էին ու մի ընդարձակ տեղեկագիր պատրաստել: Բայց դժբախտաբար, Վահան Տէրեանին խօսելու առիթ իսկ չտրուեց:

Լաւատեսութիւնը փարատուեց, երբ Քառեակ Զինակցութիւնը ահռելի պայմաններ դրեց ռուսների առջեւ: Բանակցութիւնները ընդհատուեցին ու գերման բանակը դարձեալ յարձակման դիմեց: Ռուս ներկայացուցչութիւնը, Տրոցկիի ղեկավարութեամբ մի տարօրինակ կարգախօս մէջտեղ բերեց, «Հաշտութիւն չենք ստորագրում, պատերազմ չենք անում, զինաթափ ենք անում մեր բանակներին եւ անզէն բողոքում ենք գերման եւ աւստրօ-հունգարական բանուորութեան յեղափոխական խղճին»: Բայցեւայնպէս, Ռուսաստանը դարձեալ բանակցութիւնների գնաց, որի վերջում, բացի հայկական վեց վիլայեթների պարպումից, Էնվերի եւ Թալէաթի պնդումով Գերմանիան Թուրքիայի համար պահանջում էր Կարսը Արդահանը եւ Բաթումը: Համաձայնագրում Ռուսաստանին պարտադրւում

էր նաեւ առանձին պայմանագրեր կնքել Քառեակ Զինակցութեան բոլոր պետութիւնների հետ: Այդ ծիրի մէջ էր ռուս-թրքական համաձայնագիրը ուր Բոլշեւիկ Ռուսաստանը խոստանում էր կազմալուծել եւ ցրել հայկական բոլոր զօրամասերը Կովկասում եւ Թրքահայաստանում:

Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը ստորագրուեց 1918-ի Մարտ 3-ին եւ Համառուսական Սովետների համագումարը Մոսկուայում 1918-ի Մարտ 15-ին վաւերացրեց այն: Այդ ժամանակ արդէն Մոսկուա էր փոխադրուել Խորհրդային Ռուսաստանի մայրաքաղաքը:

Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը իրողութիւն էր եւ գործադրւում էր քայլ առ քայլ: Բողոքներ եւ դժգոհութիւններ որեւէ ազդեցութիւն չունէին: Տրոցկին ընդունում էր, որ համաձայնագիրը հայերի համար աղետալի է: Այն դժբախտութիւն էր համարում, ասելով, «ուրախ եմ, որ ես չէի համաձայնագրի տակ ստորագրողը»: Այդ ժամանակ Ջիչերինը արդէն փոխարինել էր Տրոցկուն:

Բոլշեւիկ Ռուսաստանի հետ յարաբերութեան մէջ մտնելու անարդիւնք փորձ - Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը ստորագրուելուց յետոյ, մի որոշ ժամանակ դեռ Տրոցկու բարեացակամութիւնը շարունակուեց հայերի նկատմամբ: Լիպարիտ Նազարեանցի եւ Արշակ Ջամալեանի յուշերում կարդում ենք, որ նա օգնութիւն էր խոստացել, նոյնիսկ խորհուրդ էր տուել Բրեստ Լիտովսկի համաձայնագրի դէմ Եւրոպայում բողոքել Դաշնակիցներին ու գերմանացիներին: Նոյնիսկ, այդ օրերի ճամբորդութեան

դժուարութիւնների պայմաններում, նա կարգադրել էր հայազգի բոլշեւիկ, Մոսկուայում բարձր պաշտօնի հասած Լեւոն Կարախանին դիւրացնել իրաւունք ստանալու եւ Եւրոպա մեկնելու հարցը: Տրոցկին խոստացել էր խօսել Լենինի հետ եւ տուն վերադարձող Չեքոսլովաքիայի քառասուն հինգ հազարանոց զօրամասը դէպի թուրքական ճակատ շրջել: Նա համոզել էր Լենինին համագործակցութեան մէջ մտնել Դաշնակցութեան հետ, ինչպէս Լենինն էր արտայայտուել, նրանով հանդերձ, որ գաղափարախօսութեան մեծ տարբերութիւն կար երկուսի միջեւ:

Արշակ Ջամալեանը վստահ է, որ բանակցութիւնները երկուսի միջեւ կը սկսէին, եւ նախնական կարգադրութիւններն էլ արուած էին արդէն, եթէ չլինէր հայ բոլշեւիկների, մանաւանդ՝ Հայկական Գործերի Կոմիսարիատի սուր թշնամութիւնը Դաշնակցութեան դէմ: Հայկական Գործերի Կոմիսարիատը բողոքել էր, որ Կոմիսարիատի խորհուրդներին հակառակ Տրոցկին միջնորդում է «հակա-յեղափոխական» կուսակցութեան՝ Դաշնակցութեան օգտին: Նրանք վերջապէս կարողացել էին համոզել Տրոցկուն, որ Դաշնակցութիւնը Կովկասում Անգլիական քաղաքականութեան է յարել եւ համագործակցութիւն նրա հետ անիմաստ է:

Պաշտօնական ուղղակի կապի բացակայութեան պայմաններում մինչեւ աննախութիւն, Դաշնակցական ղեկավարները փորձում էին անհատական կապերի միջոցով երկխօսութիւն ստեղծել: Միջոցներից մէկը Հայաստանում գործող փոքրաթիւ բոլշեւիկներին սիրաշահել եւ Մոսկուայի հետ կապ հաստատելու համար նրանց վրայ յենուելն էր. ինչպէս օրինակ՝ Արամ Մանուկեանը Մոսկուա էր ուղարկել բոլշեւիկ

գործիչ Պօղոս Մակինցեանին՝ այդ գծով աշխատելու: Ի հարկէ, Պօղոս Մակինցեանը Մոսկուա հասնելուն պէս աշխատանքի էր անցել Չեկայի մէջ ու խոստումը մոռացել: Ցետագայում, ինքն էր, որ Լազարեան Ճեմարանի դասացուցակը հիմնովին փոխեց՝ ալն կոմունիստական գաղափարախօսութեան յարմարեցնելու համար:

Ռուբէնը եւս խօսում է այսպիսի համագործակցութեան մասին բոլշեւիկներ Ստեփան Շահումեանի եւ Դանուշ Շահվերդեանի հետ՝ ի կատար ածելու Արեւմտահայաստանի անկախութիւնը: Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը վերջ դրեց այդ հարցին եւս:

Դաշնակցութիւնը պայքարի մէջ էր Հայկական Հարցի լաւագոյն լուծումը գտնելու: Ըստ Ռուբէն Տէր-Մինասեանի, Դաշնակցութիւնը եւ Ազգային Խորհուրդը երեք ընտրանք կամ երեք ճամբայ ունէին ընտրելիք: «Առաջինը, լինել Վրաստանի եւ Ադրբեջանի հետ՝ երես ուղղելով դէպի գերմանացիք եւ Թուրքիան: Երկրորդը, դէմ լինել թուրքերին եւ հարեւաններին՝ յոյսեր կապելով Դաշնակիցների յաղթութեան վրայ: Երրորդը, դէմ լինել ե՛ւ հարեւաններին, եւ Դաշնակիցներին, յենուել Մոսկուայում հիմնաւորուած բոլշեւիկների եւ Կովկասում մնացած նրանց բեկորների վրայ»: Հենց ի՛ր Ռուբէնի վկայութեամբ, Դաշնակցութիւնը բացարձակ դիրքորոշում չորդեգրեց եւ փորձեց օգտագործել բոլոր կարելիութիւնները, որովհետեւ ո՛չ միայն որեւէ մէկ յենարան այդ օրերին համահայկական շահերի երաշխիքը չէր ընծեռում, այլ նաեւ դաշնակցական ղեկավարները միատեսակ կողմնորոշում չունէին:

Համագործակցութիւն Բաքուի Բոլշեւիկ իշխանութեան հետ - Բոլշեւիկեան յեղաշրջումը շփոթի էր մատնել Կովկասի վարչամեքենան, որ դեռ շարունակում էր հաւատարիմ մնալ ժամանակաւոր Կառավարութեան: Այդ կառոյցի մէջ կարեւոր դեր ունէին վրացի Սոցիալ-Դեմոկրատ Մենշեւիկները, որոնք բնականաբար հակա-բոլշեւիկներ էին: Միայն Բաքուն էր ոգեւորութեամբ հաստատել իր հաւատարմութիւնը բոլշեւիկ իշխանութեան հանդէպ, ուր եւ կազմուել էր Բաքուի սովետը: Իսկ Ստեփան Շահումեանը, որ 1917-ի Դեկտեմբեր 16-ի հրամանագրով նշանակուել էր Կովկասի յատուկ Կոմիսար, Թիֆլիսում ձախողելով անցել էր Բաքու եւ այնտեղ հաստատուել: Հետաքրքիր է, որ ամբողջ Կովկասում, վրացի մենշեւիկներ, մուսուլման մուսաւաթականներ եւ Դաշնակցութիւն միացած պայքարում էին բոլշեւիկների դէմ. իսկ Բաքուում Դաշնակցութիւնը համագործակցութեան ձեռք էր պարզում Բոլշեւիկներին՝ յանձին Ստեփան Շահումեանի: Համագործակցութիւնը ռազմական գետնի վրայ էր: Կազմուել էր միացեալ բանակ՝ Դաշնակցութեան զինեալ ուժերի մասնակցութեամբ՝ կռուելու ընդհանուր թշնամու՝ մօտեցող թուրքական բանակի դէմ եւ հայ բնակչութեանը պաշտպանելու համար մուսաւաթականների դրդմամբ տեղացի թուրքերի անդադար յարձակումներից, ոտնձգութիւններից ու կոտորածից: Ռոստոմը Բաքուում էր եւ կարողացել էր այնտեղ ցրուած հայ զինուորներից բանակ ստեղծել. իսկ Ստեփան Շահումեանը պէտք ունէր այդ ուժի եւ Բաքուի հայ բնակչութեան վրայ մեծ ազդեցութիւն ունեցող Դաշնակցութեանը: Այդ համագործակցութեան մէջ, ի հարկէ, անկեղծ չէր

Շահումեանը: Լենինին գրուած մի նամակում նա ցաւ է յայտնում, որ «...ռեւոլուցիոն սովետների փոխարէն, մենք ունենք ռէակցիոն բուրժուական կամ կալուածատիրական ազգային խորհուրդներ, որոնք ազգային կառավարութիւնների դեր են խաղում: Ինտեռնացիոնալ սովետական կարմիր գվարդիայի փոխարէն, մենք ունենք ռէակցիոն տարրերի կողմից ղեկավարուող գնդեր»:

1918 թուի Մարտ 18-ին, Մուսաւաթի դրդմամբ, կովկասեան թաթարները ապստամբում են Բաքուի Բոլշեւիկ իշխանութեան դէմ: Ստեփան Շահումեանը բոլշեւիկ նաւատորմի միջոցով պաշտպանութեան է անցնում, իսկ հայկական զօրամասը կռուի մէջ է մտնում այն ժամանակ երբ թաթարները սկսում են յարձակուել հայկական թաղամասերի վրայ: Չորս օր կռուից յետոյ, թաթարները հետ են մղւում: Դաշնակցութեան համագործակցութիւնը իր արդիւնքն էր տուել:

Տարօրինակ է այս վստահութիւնը, որ Դաշնակցութիւնն ու Բաքուի Ազգային Խորհուրդը, որ այդ օրերին Թիֆլիսից կտրուած գործում էր անկախ, ցուցաբերեցին Շահումեանի նկատմամբ: Ցոյսն այն էր որ Շահումեանը կը բարեխօսի Սովնարկոմի մօտ՝ հայ ժողովրդի եւ Հայաստանի նկատմամբ բարեացակամ վերաբերմունք ցոյց տալու: Այս բոլորով հանդերձ, երբ Շահումեանը Ապրիլ 13-ի նամակով Բաքուի կռիւների մասին զեկուցում էր Լենինին, Դաշնակցութեան դերը ընդունելով հանդերձ, գրում էր, «Դաշնակցութեան պարտիային, թէեւ նա մեզ պաշտպանում էլ է ամէն բանում, առայժմ ոչինչ մի խոստացէք եւ ոչինչ մի տուէք: Նրանց ուժեղացնել այլեւս պէտք չէ»:

Մարտի 18-ի Բաքուի պաշտպանութեան յաջողութիւնից ոգեւորուած Շահումեանը ամրապնդում էր բոլշեւիկեան տիրապետութիւնը, հրամայելով լուծարել բոլոր Ազգային Խորհուրդները եւ ազգային զօրամասերը: 1918-ի ապրիլին արդէն, բոլշեւիկեան տիրապետութիւնը Բաքուում կատարեալ էր, բայց մուսաւաթականները, որոնք առայժմ Գանջայում (Գանձակ) էին կենտրոնացած, Բաքուն չպիտի զիջէին բոլշեւիկներին:

Կազմուած միացեալ բանակի ուժը օգտա-գործելով, Շահումեանը բանակը շարժեց՝ խլրտումները սաստելու եւ ապա՝ դէպի Գանձակ եւ Թիֆլիս առաջանալով՝ ամբողջ Կովկասում բոլշեւիկեան իշխանութիւն հաստատելու համար: Բանակի ընդհանուր հրամանատարը Գեներալ Բագրատունին էր, իսկ հայկական զօրամասը ղեկավարում էր Համազասպը: Մասնակից էր նաեւ Ռոստոմը: Հայկական զօրամասի նպատակն էր Երեւան հասնել ու պաշտպանել նորանկախ հանրապետութիւնը: Կռիւները սարսափելի էին եւ Կարմիր բանակն էլ մեծ ուժ չէր Բաքուում: Յուլիս 5-ին Բաքու է հասնում գնդապետ Բիչերախովի փոքրաթիւ զօրամասը: Շահումեանը ոգեւորուած նոր հակա-յարձակողականի է դիմում, բայց Յուլիս 26-ին, Բիչերախովը իր զօրամասով փախուստ է տալիս:

Այս բոլորի մասին Շահումեանը զեկուցում է Ստալինին, գրում մօտեցող թուրքական բանակի մեծ վտանգի մասին եւ թուրք-գերմանական համաձայնութիւնը Կովկասի խորհրդայնացման դէմ ամենամեծ թշնամին է համարում: Բաքուի պրոլետարիատի անունից երդւում է ո՛չ մի կաթիլ քարիւղ չտալ թուրքերին: Բայց նոյն ժամանակ

Լենինը թուրքերին բարեկամութեան ձեռք էր մեկնել եւ գերմանացիներին Բաքուի քարիւղ խոստացել: Այս բոլորը ռուս-գերմանական գաղտնի համաձայնութեան հիման վրայ, որով Գերմանիան ընդունել էր սովետական իշխանու-թիւնը Կովկասի հարաւում եւ արեւելքում. իսկ սովնարկոմը ընդունել էր Գերմանիոյ հովանաւորութիւնը Վրաստանին:

Ճակատագրական վիճակ էր Բաքւում: Տեղացի մահմեդականները մօտեցող թուրք բանակի ուժին յենուած կոտորած էին սպառնում Բաքուի 100,000 քրիստոնեայ բնակչութեանը: Ռուսաստանից օգնութիւն չկար, միակ ուժը մօտակայքում տեղակայուած անգլիական զօրամասերն էին, որոնց հրաւիրելուն սոսկալի դէմ էր Շահումեանը: Նրա կարծիքով եթէ անգլիացիները մտնէին այլեւս դուրս չէին գայ. իսկ թուրքերին՝ ռուսները կը հանէին: Իսկ ինչ վերաբերում է հայերին սպառնացող կոտորածներին, Շահումեանի կարծիքով դա էլ ընդունելի էր՝ երբ իրենք համաշխարհային յեղափոխութիւն էին տարածում: Չէ՞ որ Լենինը ասել էր, «Պռոլետարական ինտեռնացիոնալիզմը բուրժուազիայի նկատմամբ յաղթանակ իրականացնող ազգի կողմից պահանջում է մեծագոյն ազգային զոհողութիւնների գնալու ունակութիւն եւ պատրաստակամութիւն յանուն միջազգային կապիտալի տապալման»:

Մանրամասնութիւնների մէջ չմտնելու համար յիշենք, որ անգլիացիները վերջապէս հրաւիրուեցին, բայց նրանց բերած փոքրաթիւ զօրքը չկարողացաւ դէմ դնել թուրք բանակին եւ պաշտպանել Բաքուն: Անգլիացիների միջամտութիւնը մերժելով, հրաժարուեցին Շահումեանն ու Բաքուի 26

կոմիսարները եւ հսկայ քանակութեամբ մթերք, դրամ եւ քարիւղ նաւի վրայ բարձած Բաքուից հեռանալու անյաջող փորձ կատարեցին:

Նիւթից դուրս է եւ չպիտի անդրադառնամ թուրք բանակի Բաքուի գրաւման, 1918 թիւ, Սեպտեմբեր 15, եւ դրան հետեւող թալանի ու կոտորածի մասին: Ի հարկէ, Թուրք բանակի ներխուժումից առաջ Շահումեանն ու 26 կոմիսարները Բաքուից դուրս էին եկել, ճանապարհին, սակայն, ձերբակալուել ու գնդակահարուել: Խորհրդահայ պատմագրութիւնը հերոսացրեց Շահումեանին, անտեսեց նրա ապազգային գործունէութիւնը: Նրա սպանութիւնը Դաշնակցութեան վերագրեց ու դատափետեց:

«Ազգային հերոս» Շահումեանի արձանը կանգնած է Երեւանի կենտրոնում:

Այսպէս, Բաքուի գրաւումից յետոյ անկախ Ադրբեջանի մուսաւաթական իշխանութիւնը Գանջայից փոխադրուեց Բաքու: Իսկ հայ բնակչութեան սպանդով ու արտաքսումով այլեւս Բաքւում վերացաւ հայ քաղաքական ու մշակութային կենտրոնացումն ու ազդեցութիւնը:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՊԷՍ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Ստեփան Շահումեանի հակադաշնակցական տրամադրութիւնները Բաքուից Լենինին գրած իր նամակներում գալիս էլ լրացնելու Հայկական Գործերի Կոմիսարիատի նոյն հակադաշնակցական գործունէութիւնը եւ յորդորները Լենինին: Կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» թերթի 1918, Յունիս 30-ի համարում պատերազմ էր յայտարարւում գերմանօ-թրքական դաշնակ Հայաստանի դէմ եւ նորանկախ Հայաստանը համարում էր բանուոր դասակարգի գերեզման, որ հայ բուրժուազիան է փորում:

Այս նոյն ոգիով, 1918-ի Յուլիսին, սովետների 5-րդ համագումարում որոշում էր կայացւում, «դաշնակների ամէն տեսակ գործողութիւնները դիտել որպէս դաւաճանութիւն»: Իսկ նախքան այդ, Ստեփան Շահումեանը Յուլիս 23-ին գրել էր Լենինին, «Մեր դրութիւնը միջազգային տեսակէտից իսկապէս սոսկալի է: Անկախ Վրաստան, անկախ Ադրբեջան, որպէս թէ անկախ Հայաստան»:

Գուրգէն Հայկունին, որ Կոմիսարիատում Վահան Տէրեանին էր փոխարինել, 1919-ի Մարտին Մոսկուայում գումարուած երրորդ Ինտեռնացիոնալին խօսք առնելով, խաբէութիւն է համարում ազգային հանրապետութիւնները, դաշնակ ղեկավարներին աւազակախումբ կոչում եւ վիրաւորանք՝ հայ գիւղացու ու բանուորի դէմ շպրտուած: Նա հաւատացնում է, որ Հայ Կոմունիստական Կուսակցութիւնը կը պայքարի ապահովելու Բոլշեւիզմի տիրապետութիւնը Հայաստանում:

Անկախ Հայաստանի իշխանութեան կապերը հակաբոլշեւիկ ուժերի հետ - Հայաստանի անկախութեան առաջին օրերից իսկ, բացի բոլշեւիկեան իշխանութիւնից, ուշադրութեան առարկայ են եղել նախկին ցարական կայսրութեան տարածքում գործունէութիւն ծաւալած ու բոլշեւիկեան մենատիրութեան դէմ պայքարող ուժերը: Այդ ժամանակ նոյնիսկ Եւրոպայում, Ռուսաստանի Դաշնակիցների մօտ չկար այն հաւատքն ու վստահութիւնը, թէ բոլշեւիկեան իշխանութիւնը կը յարատեւի:

Հայաստանի իշխանութիւնների կողմից մօտեցման փորձ կատարուեց եւ յարաբերութիւններ մշակուեցին Սպիտակ Բանակի զօրավար՝ Անտոն Դենեկինի եւ Սիբիրում իշխանութիւն հաստատած Ծովակալ Կոլչակի հետ: Սա պիտի նպաստէր Հայկական Հարցին եթէ դրանցից մէկը յաղթական դուրս գար: Այս քաղաքականութիւնը հաստատուեց նաեւ ՀՅԴ 9-դ Ընդհանուր Ժողովում: Բայց կար մի հիմնական անպատեհութիւն, դա բոլշեւիկ իշխանութեան կասկածն ու անվստահութիւնն էր Հայաստանի իշխանութեան հանդէպ, որ յարուցուել էր այդ յարաբերութիւնների

արդիւնքում: Ապացոյց դրան՝ երբ Արտաքին Գործերի Կոմիսար՝ Ջիչերինը 1919-ի Օգոստոսին հրաւիրում էր Կովկասի կառավարութիւններին միանալ Մոսկուային միասին պայքարելու Դենեկինի ուժերի դէմ, Հայաստանը հրաւէր չստացաւ:

Բոլոր պարագաներում, թէ՛ Բոլշեւիկ եւ թէ՛ Ռուսաստանի հակադիր ուժերը մէկ հարցում նոյն դիրքորոշումն ունէին, եւ դա Ցարական Կայսրութեան սահմանների ամբողջականութիւնն էր: Այդ դիրքից ելնելով էր, որ Դենեկինը յայտարարել էր, թէ ճանաչում է Բոլշեւիկ իշխանութեան դէմ դուրս եկած եւ սահմանային շրջաններում կազմուած կառավարութիւններին. սակայն յետագայում, Ռուսաստանի ամբողջականութիւնը ելակէտն է լինելու որեւէ հարցի լուծման: Նոյն քաղաքականութիւնն էր առաջնորդում Բոլշեւիկ Ռուսաստանը՝ երբ Մոսկուայում համաձայնագիր էր մշակում Դաշնակիցների ներկայացուցիչ William Bullitt-ի հետ: Դաշնակիցների ճնշման տակ սովետները ընդունել էին նախկին ցարական Կայսրութեան տարածքի վրայ ստեղծուած հանրապետութիւնների գոյութիւնը, բայց միեւնոյն ժամանակ կարողացել էին համոզել Դաշնակիցներին իրենց զօրքերը դուրս բերել Ռուսաստանից եւ չօժանդակել որեւէ իշխանութեան՝ Ռուսաստանի դէմ ելնելու: Ուրեմն Մոսկուան վստահ լինելով, որ Դաշնակիցները դուրս են եւ որեւէ օժանդակութիւն չի գալու նրանցից, ժամանակաւորապէս ընդունում էր այդ հանրապետութիւնների գոյութիւնը:

ՀՑԴ 9-րդ Ընդհանուր ժողովի գծած ուղիներով - 1919-ի Սեպտեմբեր 27-ին Երեւանում կայացած

ՀՑԴ Ընդհանուր ժողովը մի կարեւոր հարթակ էր, ուր նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնն ու յարաբերութիւններն էին քննարկւում եւ Հայաստանի կառավարութեան ապագայ գործունէութեան բանաձեւերը վաւերացւում: Հետաքրքիր է, որ որքան էլ որ Հայաստանը ռուսներից անկախ քաղաքականութիւն էր վարում, Դաշնակիցների կարծիքով մանաւանդ անգլիացիների համար, կառավարութիւնը ռուսական արեւելում ունէր, հայը «անուղղելի ռուսասէր, ռուսական օրիենտացիայի անյողդողդ հետամտող» էր: Այս տպաւորութիւնը յայտնել էին արտաքին գործոց նախարար Սիրական Տիգրանեանին, որով եւ նա Դաշնակիցների թրքամէտ քաղաքականութիւնն ու գործունէութիւնը Կարսում, Ղարաբաղում եւ Զանգեզուրում, դրանով էր բացատրում: Այս կարծիքը կիսում էին արեւմտահայ ղեկավարները, «արեւելահայերը կը ձգտին չբաժնուիլ Ռուսաստանէն եւ անկախանալ, կը խուսափին զինուորագրուիլ»: Ի հակասութիւն դրան, Մոսկուան էլ Հայաստանի իշխանութիւններին դիտում էր իբրեւ Դաշնակիցների կառքին լծուած: Դաշնակցութեան նախաձեռնութեամբ 1919-ի Մայիս 28-ին հռչակուած «Միացեալ եւ Անկախ Հայաստանի աքտը» միտում էր վերջ տալ այդ արհեստական «օրիենտացիաներին» եւ երկու հատուածներին մէկ պետութեան մէջ միացնել: Իսկ 9-րդ Ընդհանուր ժողովը որոշում էր, «Լիակատար բարեացակամ վերաբերում ունենալով հանդերձ դէպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանի քաղաքական վերածնութիւնը, մեր դիւանագիտութիւնը պէտք է դիմադրի Ռուսաստանում գոյութիւն ունեցող կառավարութիւնների փորձերին՝ տարածելու

ռուսական իշխանութիւնը նախկին Ռուսաստանի վրայ եւ այդպիսով անհնարին դարձնելու Հայաստանի ամբողջացման գործը»:

«Միացեալ եւ Անկախ Հայաստանի աքտը» աւելի գրգռեց հայ բոլշեւիկներին, որոնց համար արդէն անկախ հանրապետութիւնը այլանդակ մի երեւոյթ էր: 1919թ. Դեկտեմբերին Անաստաս Միկոյեանը յայտարարում էր,

> Հայ շովինիստները՝ յենուելով իմպեռիալիզմի դաշնակիցների վրայ, առաջ են քաշում յանցաւոր քիմեռային գաղափար՝ պատմական Հայաստանի սահմաններում «Մեծ Հայաստանի» ստեղծում: Հայերի բացակայութիւնը եւ այնտեղ բացառապէս մահմեդական բնակչութեան առկայութիւնը նրանց չի յուզում.... մեր կուսակցութիւնը չի կարող սատարել ո՛չ «Մեծ» եւ ո՛չ էլ «Փոքր» Թրքահայաստանի գաղափարին:

ՀՅԴ Ընդհանուր նոյն ժողովում, որոշւում էր շարունակել Դաշնակիցների հետ մշակուած յարաբերութիւնները եւ թիկունք կանգնել Փարիզի հաշտութեան վեհաժողովի Հայաստանի զոյգ պատուիրակութեան ներկայացրած միացեալ պահանջներին:

Յարաբերութիւններ անհատ բոլշեւիկների հետ — Հայաստանի անկախութեան առաջին օրերից դաշնակցական գործիչները փորձել են յարաբերութիւնների մէջ մտնել Մոսկուայի եւ արտասահմանի բոլշեւիկ ղեկավարների հետ: Օրինակ՝ Համօ Օհանջանեանը Բեռլինում, Յակոբ Զաւրիեւը եւ Արտաշէս Ջիլինգարեանը Մոսկուայում եւ այլք փորձում էին համոզել նրանց՝ ճանաչելու Հայաստանի

անկախութիւնը: Բայց Մոսկուան պատրաստ չէր նման յանձնառութեան, մանաւանդ՝ որ Գերմանիայի հետ գաղտնի բանակցութիւնների մտած նպատակ կար Կովկասը բաժանել երկու ազդեցութեան գօտիների, որով հայկական հողերը պիտի անցնէին թուրքերին:

1918-ի աշնանը Մոսկուայում, երբ Բոլշեւիկ գործիչ Սահակ Տէր-Գաբրիէլեանի միջնորդութեամբ Զաւրիեւը, Նազարեանցը եւ Ջիլինգարեանը հանդիպում պիտի ունենային Կամենեւի, Աւանէսովի եւ Սահակ Տէր-Գաբրիէլեանի հետ, Շահումեանի եւ Բաքուի Կոմիսարների սպանութեան լուրը պատրուակ բռնելով չեղեալ համարուեց հանդիպումը: Հաւատացեալ Բոլշեւիկ Պօղոս Մակինցեանը յաջողել էր կասեցնել այդ նախածեռնութիւնը եւ ձերբակալել տալ Զաւրիեւին ու Նազարեանցին՝ որպէս պատանդ Շահումեանի սպանութեան: Բանտարկուածները ազատուեցին 1919-ի Մարտ 19-ին միայն, բայց նրանց իրաւունք չտրուեց հեռանալ Մոսկուայից: Զաւրիեւը մահացաւ՝ բանտում վարակուած տիֆոիդից, իսկ Նազարեանցին յաջողուեց 1920-ի գարնան Մոսկուայից դուրս գալ:

Յարաբերութիւններ զարգացնելու նախածեռնութիւնները դադարեցին որոշ ժամանակ: Հայաստանը բռնուած էր ներքին դժուարութիւնների մէջ: Կար հայ բոլշեւիկների անհանգստութիւններն ու խլրտումները սաստելու հոգսը, մտահոգիչ էր նաեւ այն որ սահմանները վտանգուած էին ամէն կողմից: Դեռ աւելին, կառավարութեանը տուած Դաշնակիցների խոստումները նրա առջեւ մէկ այլ ճամբայ էին գծում եւ քաղաքական արեւելքում առաջադրում՝ ուր Ռուսաստանի հետ յարաբերութիւն մշակելը կարեւոր դեր չէր կատարում:

Դրութիւնը փոխուեց Կովկասում, երբ 1919-ի Նոյեմբեր 27-ին Բաքւում կնքուեց բոլշեւիկների եւ նախկին Երիտ-Թուրքերի համաձայնագիրը: Կովկասեան այս նոր իրադրութեան մէջ թուրքերը ազատութիւն էին ստանում Հայաստանի նկատմամբ իրենց քաղաքականութիւնը իրագործելու: Ըստ այդ համաձայնագրի թուրքական բանակը Հայաստանի վրայով Դենեկինի թիկունքը պիտի անցնէր՝ նրան ջախջախելու: Իսկ դա նշանակում էր նոր կոտորածներ, որոնք արգիլելու որեւէ երաշխիք չէին տալիս բոլշեւիկները: Հայ բոլշեւիկները, ի հարկէ, բոլորովին հերքում էին նման համաձայնագրի գոյութիւնը:

Ճշմարտութիւնը ստուգելու համար, ՀՅԴ Բիւրոն իր անդամներից Ռուբէն Տէր-Մինասեանին, Արշակ Ջամալեանին եւ Սիմոն Վրացեանին ուղարկում է Թիֆլիս հանդիպելու Հմայեակ Նազարէթեանին, որ Կովկասեան Կոմունիստ Կուսակցութեան, Կաւբիւրոյի ընդհանուր քարտուղարն էր: Ըստ Ռուբէնի, նա իր լռութեամբ հաստատում է լուրը եւ աւելացնում, որ այսուհետ աւելի է շեշտուելու բոլշեւիկ քարոզչութիւնը եւ ագիտացիան Հայաստանում:

Բոլշեւիկեան խլրտումներ Հայաստանում - 1920-ի Յունուարին, Ռուսաստանի Կոմունիստ Կուսակցութեան հայկական մասնաճիւղը Երեւանի իր համագումարում, քննարկում էր Հայաստանը արագ խորհրդայնացնելու գաղափարը, որի վրայ յատուկ պնդել էր Աւիս Նուրիջանեանը: Միակ դժուարութիւնն այն էր, որ Հայաստանում բաւական չափով ուժ չունէին բոլշեւիկները եւ առանց դրսի օգնութեան գործը գլուխ չէր գայ: Եւ իրօք, ինչպէս կը տեսնենք, հենց այդ դրսի

օգնութեան, այսինքն ազրբէյջանցի բոլշեւիկների եւ Կարմիր Բանակի միջոցով էր, որ հայ բոլշեւիկները Ազրբէյջանից սահմանը հատելով, մտան Հայաստան եւ երկիրը խորհրդայնացած յայտարարեցին:

Դաշնակցութիւն եւ անհատ բոլշեւիկ յարաբերութիւնների ծիրում յատկանշական է այն երեւոյթը, որ երբ 1919-ի վերջերին Վրաստանում եւ Ազրբէյջանում հալածում էին բոլշեւիկներին, Հայաստանի դաշնակցական իշխանութիւնը ապաստան էր տալիս նրանց, նոյնիսկ օգնում բանտերից փախչելու, եւ աշխատանք էր տալիս նրանց մանաւանդ կրթական բնագաւառում: Միակ պայմանն այն էր, որ նրանք հակա-կառավարական քարոզչութեամբ չզբաղուէին: Բայց այդ բոլշեւիկ հաւատացեալները թուղթիկներ էին ցրում, հայ զինուորներին հրահրում էին չկռուել թուրք ապստամբների դէմ, իսկ ռուսներին ու մահմեդականներին ապստամբութեան էին մղում կառավարութեան դէմ: Օգտուելով Հայաստանի տնտեսական սոսկալի իրավիճակից, ժողովրդին գրգռում էին, վստահեցնում, որ խորհրդային կարգեր հաստատուելուն պէս, Հայաստանը հաց ու շաքարով պիտի լեցուի: Թիֆլիսի բանտից ազատուած եւ Հայաստան ապաստանած Բագրատ Ղարիբջանեանը, օրինակ՝ Ալեքսանդրապոլում բոլշեւիկ բջիջներ էր կազմում ու հակակառավարական քարոզչութիւն տանում:

Ինչո՞ւ կառավարութեան այս մեղմ վերաբերմունքը: Հաւանական բացատրութիւնն այն է որ, նախ այդ բոլշեւիկները ռուսահայ դաշնակցական ղեկավարների դասընկերներն էին եղել համալսարանական տարիներին ու հակա ցարական շարժման մէջ գաղափարակից,

մասնակից. յետոյ դեռեւս տիրում էր այն կարծիքը, թէ նրանց միջոցով կարող են բանակցութիւնների ճամբայ բացել Մոսկուայի հետ: Ջմոռանանք, որ այս վերաբերմունքով Հայաստանի կառավարութիւնը Դաշնակիցների կասկածն էր յարուցում:

Բիւրօ կառավարութիւն – Հայաստանի իշխանութեան այս մեղմ վերաբերմունքը շարունակուեց միջեւ 1920-ի Մայիս, երբ բոլշեւիկեան խլրտումները ապստամբութեան տեսք ստացան: Կառավարութեան կազմակերպած Մայիս 1-եան տօնակատարութիւնների ու զօրահանդէսի ընթացքում հայ բոլշեւիկները ապստամբութեան դիմեցին: Ծայր առան անկարգութիւններ, խառնակութիւն, որոնք ո՛չ այնքան Երեւանում, բայց յաջողութեան հասան Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում եւ Սարի-ղամիշում: Ցուցարարները կոչ էին անում «Հայաստանի բանուորներին, գինուորներին ու գիւղացիներին» չխաբուել «անկախութիւններով» եւ «պառլամենտներով» այլ «ձգտել դէպի Ռուսաստան», որ պիտի տանի «դէպի մեր լուսաւոր ապագան՝ սոցիալիզմը»: «Դաշնակների իշխանութեան բռնի ռեւոլուցիոն տապալումը» որպէս լոզունգ ամբ որջ ուժով գնում էր Հայաստանում:

Նման մի իրավիճակում, երբ դաշնակցական մտաւորականութիւնը լծուած էր երկրի ենթակառոյցների ուժեղացման գործին, բաւարար ուժ չուներ բոլշեւիկների գրգռութիւնների դէմն առնելու: Ահա, այս իրավիճակին վերջ տալու համար ու նաեւ դէպի Հայաստան առաջացող Քեմալական զօրքերի վտանգը պարտադրեց Դաշնակցութեանը՝ երկրի ղեկը ձեռք առնել: Դաշնակցութեան Բիւրոն ամբողջ

կազմով մտաւ կառավարութեան մէջ: Կազմուեց Բիւրօ-կառավարութիւնը: 1920, Մայիս 5-ին, Ալեքսանդր Խատիսեանի կառավարութիւնը հրաժարուեց, Բիւրոն ամբողջ կազմով մտաւ կառավարութեան մէջ: Համօ Օհանջանեանը նշանակուեց վարչապետ: Որոշումը վաւերացուեց խորհրդարանում արագ, առանց այլ կարծիքների առիթ տալու: Սիմոն Վրացեանը դա կոչում է «Դաշնակցութեան դիկտատուրա»:

Առաջին քայլը խռովութիւնները խաղաղ միջոցներով լուծնելն էր, որ սակայն չյաջողուեց: Հայաստանի այլ կուսակցութիւնների, նոյնիսկ Գեւորգ Ե. Կաթողիկոսի կոչերը՝ Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի համար մտածելու եւ խլրտումները դադարեցնելու, արդիւնքի չհասան: Բոլշեւիկ ընդդիմադիրների համար մէկ ճամբայ կար, դիմել Ռուսաստանի օգնութեան, դաշնակցականներից ազատուել եւ Հայաստանը մտցնել Ռուսաստանի կազմի մէջ: Կառավարութիւնը բռնի ուժի դիմեց, եղան ձերբակալութիւններ ու սպանութիւններ, շատերն էլ Ազրբէյջան փախան: Երկու շաբաթում երկիրը խաղաղուեց: Այդ գործողութեան մէջ մեծ դեր ունեցան Ռուբէնը եւ նախկին ֆիդայիներից կազմուած խմբերը Սեպուհի հրամանատարութեան տակ, որ «աշխատաւորների դահիճ» պիտակը ստացաւ: Իսկ բոլշեւիկ մամուլը սոսկալի պատմութիւններ էր տարածում եւ ամենուրեք յայտարարում էր, թէ Հայաստանում բոլշեւիկների ջարդ է տեղի ունենում: Այս լուրերով, ի հարկէ, վարկաբեկւում էր Հայաստանի իշխանութիւնը:

Յիշենք որ, այս ժամանակաշրջանի եւ Բիւրօ Կառավարութեան գործելակերպը խիստ քննադատութեան ենթարկուեց 1921-ի Ապրիլին

Բուքրեշի ՀՅԴ Խորհրդաժողովին: Եզրակացութիւնն այն էր, որ «Բիւրոն չէ աշխատած ստեղծելու կուսակցական ուժեղ կազմակերպութիւն», այլ «մտած է կառավարութեան մէջ, լքելով կազմակերպական շահերը»:

Խորհրդային Ազրբէյջանի սպառնալիքը - Ազրբէյջանի խորհրդայնացումը, Ապրիլ 28, 1920, ճակատագրական ազդեցութիւն ունեցաւ Հայաստանի անկախութեան համար: Բաքուն դարձաւ Անդրկովկասում Կոմունիստական քաղաքականութեան ձեւաւորման եւ գործադրման մի կարեւոր կենտրոն: Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը՝ Արմենկոմը ոգեւորուած անմիջապէս կապ հաստատեց Ազրբէյջանի կոմունիստ իշխանութեան հետ եւ օգնութեան դիմումներ ուղղեց՝ քարիւղ եւ պարեն ստանալու եւ տապալելու դաշնակներին: Հայաստանի բոլշեւիկ ղեկավարները արդէն հաւատացած էին, որ հայ պռոլետարիատը շուտով կը յաղթի դաշնակ իշխանութեանը: Բայց, ի հարկէ, Ազրբէյջանի կոմունիստ իշխանութեան հետ կապը միշտ մնաց միակողմանի:

Հետաքրքիր է, որ Ազրբէյջանի խորհրդայնացումը Հայաստանի կառավարութիւնն էլ էր ոգեւորութեամբ ընդունել՝ կարծելով, որ մուսաւաթականների պարտութեամբ Ղարաբաղի եւ Զանգեզուրի հարցը լուծելի կը դառնայ: Բայց հենց առաջին շաբաթուայ մէջ Երեւանը վերջնագիր ստացաւ Ազրբէյջանից՝ երեք օրում դատարկել «Ադրբեջանի անվիճելի հողամասերը»: Բաքւում ձերբակալուեցին Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչները: Միւս կողմից էլ, Ղարաբաղի թաթար նահանգապետ Սուլթանովը

ճնշում էր Շուշիի հայ ղեկավարութեանը դադարեցնել դիմադրութիւնը եւ իշխանութիւնը յանձնել Ռեւկոմին (Յեղափոխական Կոմիտէ) քանի որ Կարմիր Բանակը Ղարաբաղում է արդէն: Ի հարկէ, Ղարաբաղի ազգային խորհուրդը որոշեց շարունակել դիմադրութիւնը: Երեւանից էլ այդպիսի հրահանգ էր ստացուել: Հակառակ այս բոլորի, Մայիս 27-ին Դրոն հանդիպում է բոլշեւիկ ղեկավարութեան հետ, նրանց է յանձնում Ղարաբաղի ղեկը, իր մօտ գտնուող դրամն ու զինամթերքը եւ անցնում Զանգեզուր: Նրա համար անընդունելի էր, որ Երեւանի կառավարութիւնը բանակցութիւնների եւ Մոսկուա ուղղուած խնդրագրերի միջոցով է ցանկանում Ղարաբաղի հարցը լուծել:

Դաշնակիցների պարտաւորութիւնը Հայաստանին - Մէկ այլ հարթակում, Հայաստանի պատուիրակութիւնը Աւետիս Ահարոնեանի նախագահութեամբ աշխատանք էր տանում Փարիզում Դաշնակիցների բարի տրամադրութիւնը Հայկական Հարցի վերաբերեալ ապահովելու համար: Ահարոնեանը լաւատես էր: Իր հանդիպումների ու անհատ դիւանագէտների հայանպաստ յայտարարութիւնների մասին Երեւանի կառավարութեան զեկուցելով՝ այդ լաւատեսութիւնը նրան էլ էր փոխանցում:

Մեր նիւթից դուրս է այդ բանակցութիւնների եւ խոստումների մասին մանրամասնելը: Կարեւորը տպաւորութիւնն էր, որ Հայաստանի ապագայի հարցը Դաշնակիցների օրակարգի վրայ էր՝ որքան էլ որ իրարու միջեւ առաջացած մրցակցութիւնները, աշխարհաքաղաքական քարտէզի նկատմամբ անդադար փոխուող կարծիքներն ու շահերը, Թուրքիոյ

նկատմամբ Դաշնակիցների տրամադրութիւններն ու արդէն սպառնացող Խորհրդային Ռուսաստանի թշնամական դիրքը լուծման ճամբան խոչընդոտէին: Վերջնական արդիւնքի մասին գիտենք արդէն Սեւրի Դաշնագիր, Ուիլսոնեան Հայաստան, որոնք բոլորն էլ օդում մնացին:

ՄՈՍԿՈՒԱ-ԵՐԵՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչեւ 1920-ի գարնանը, Մոսկուա-Երեւան բանակցութիւնները տարուում էին անպաշտօն կերպով: Իրականութեան մէջ, Հայաստանի իշխանութեան ուշադրութեան կենտրոնում էին երկրի ներքին իրավիճակը, տնտեսական եւ կառուցային բարելաւումը, Սպիտակ Ռուսների, այսինքն հակա-բոլշեւիկ ուժերի յաջողութիւնները, Դաշնակից պետութիւնների անդադար խոստումները եւ միացեալ Հայաստանի ապագան կապուած այդ խոստումներին, նրանց de facto ճանաչումը Հայաստանի եւ հաւաստիացումը, որ շուտով Փարիզում տեղի ունենալիք հաշտութեան վեհաժողովում պիտի քննուի Հայկական Հարցը: Ուրեմն ո՛չ այնքան կապը Բոլշեւիկ Ռուսաստանի հետ, որի գոյութիւնն անգամ որպէս երկրի օրինական տէր խնդրոյ առարկայ էր եւ վիճելի Արեւմուտքի ու Դաշնակիցների համար: Բացի այս բոլորը, վախն այն էր, որ բոլշեւիկ Ռուսաստանի հետ բանակցութեան մէջ մտելով, կարող են վտանգել Դաշնակիցների

հետ մշակուած սերտ կապերը: Կարմիր Բանակի վերջնական յաղթանակը եւ շարժը դէպի Կովկաս փոխեց այդ կեցուածքը, մանաւանդ, ըստ Համբարձում Տէրտէրեանի, Կարմիր Բանակի կովկասեան թեւի հրամանատար Սերգէյ Օրջոնիգիձէի մէկ գրութիւնը Վլադիկաւկազից Երեւան յիշեցնում էր, որ եթէ Հայաստանը ցանկանում է պաշտօնապէս ճանաչուել ռուս կառավարութեան կողմից, պիտի դուրս գայ կղզիացումից եւ բանակցութիւններ սկսի Մոսկուայի հետ:

Բանակցութիւնների սեղանին - Բանակցութիւնների հողը պատրաստ էր: Նշանակուած պատուիրակութիւնը բաղկացած էր Լեւոն Շանթից, Համբարձում Տէրտէրեանից, Լեւոն Զարաֆեանից: Արամայիս Երզնկեանն ու Սիմոնիկ Փիրումեանը, երկու մենշեւիկներ, որոնք ինտեռնացիոնալ սոցիալիզմին էին յարել, որպէս Ղարաբաղին լաւատեղեակ միացան պատուիրակութեան:

Պատուիրակութիւնը պարտականութիւն էր ստանձնել Մոսկուային համոզել ընդունելու Հայաստանի անկախութիւնը (ներառեալ Լեռնային Ղարաբաղը): գոնէ սկզբունքով ընդունել Թրքահայաստանի կցումը Հայաստանին, Հայաստանի ներքին գործերին չխառնուել եւ կոմունիստական գործունէութիւն չտանել, եւ վերջապէս, թոյլատրել Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում ցրուած հայ գաղթականներին՝ Հայաստան վերադառնալ: Պատուիրակութեան ժամանման մասին հեռագիր յղուեց Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար՝ Գրիգորի Չիչերինին: Փոխադրական միջոցների չգոյութեան պատճառով, սակայն,

պատուիրակութիւնը Մոսկուա հասաւ Մայիսի վերջին երբ Ղարաբաղում ու Զանգեզուրում շարունակւում էր կռիւը, այս անգամ ո՛չ թէ մուսաւաթականների, այլ Կարմիր Բանակի դէմ: Կարճ ժամանակում տեղի ունեցաւ հանդիպում Չիչերինի հետ, ներկայ էր նաեւ նրա հայազգի օգնական՝ Լեւոն Կարախանը:

Առաջին հարցը որ բարձրացրեց Չիչերինը բոլշեւիկների դէմ ի գործ դրուած ճնշումներն ու բռնութիւններն էին: Իսկ պատուիրակութիւնը ճամբաներում բռնուած լուր անգամ չունէր ապստամբութեան մասին: Մէկ այլ կարեւոր հարց ռուսների համար այն էր, որ Հայաստանը խոստանայ Թուրքիային չհարուածել՝ երբ Ռուսաստանն ու Թուրքիան միացեալ ուժերով կռուեն Եւրոպացի իմպերիալիստներին Թուրքիայից վռնդելու: Բոլշեւիկները պնդում էին նաեւ, որ Հայաստանը իր կապերը կտրի Դաշնակիցների հետ եւ արտօնի Ռուսաստանին հաշտութեան վեհաժողովի օրակարգից հանելու Հայաստանին ու հայութեան վերաբերող կէտերը: Արեւմտահայաստանը Հայաստանի հանրապետութեան միացնելու հարցում, Չիչերինը միանգամայն հակառակ էր, քանի որ ըստ բոլշեւիկեան սկզբունքների, հողերի բաժանումը պատմական պատկանելիութեամբ չի լինում: Հողը պատկանում է այդ հողի վրայ աշխատող գիւղացուն: Բաւական երկար փաստարկութիւններից յետոյ, կարծես արդիւնքը տեսանելի էր դառնում: Յունիսի կէսերին վերսկսած բանակցութիւններում երեւում էր որոշ համաձայնութիւն: Արեւմտահայաստանից որոշ շրջաններ կցւում էին Հայաստանին, Նախիջեւանն ու Զանգեզուրը մնում էին Հայաստանին, Ղարաբաղը վիճելի էր յայտարարւում, որ ապագայում հանրաքուէով

պիտի լուծուէր: Ռուսաստանը նոյնիսկ խոստանում էր տնտեսապէս օգնել Հայաստանին:

Բայց իրականութիւնը այլ էր: Հայ բոլշեւիկները, որոնք Հայաստանից Մոսկուա էին փախել, սոսկալի ընդդիմութիւն էին ցոյց տալիս եւ աշխատանք թափում բանակցութիւնները ձախողեցնելու: Բաքու փախած հայ բոլշեւիկները՝ Նուրիջանեան, Կասեան, Միկոյեան, չափազանցուած լուրեր էին ուղարկում, թէ ինչպիսի վայրագութիւններ են կատարուել հայ բոլշեւիկներին Հայաստանում ճնշելու: Մոսկուայում աշխատանք էին տանում ազրբէյջանցիները եւս: Կարմիր Ազրբէյջանը ո՛չ մի գնով պատրաստ չէր Ղարաբաղի ու Զանգեզուրի կռիւը դադարեցնել: Այս առիթով, Անաստաս Միկոյեանը յայտարարում էր,

> Ինչ վերաբերում է արդէն Սովետական Ադրբեջանի մէջ մտած իբրեւ թէ վիճարկելի Զանգեզուրին ու Ղարաբաղին, ապա կատեգորիկ յայտարարում ենք, որ այդ վայրերը անառարկելիօրէն եւ այսուհետեւ պէտք է գտնուեն Ադրբեջանի սահմաններում.... Մենք դէմ չենք Հայաստանի հետ խաղաղութեանը, բայց ո՛չ մի դէպքում Ղարաբաղի եւ Զանգեզուրի գնով:

Նոյն ժամանակ Մոսկուա էր գտնւում Քեմալական Թուրքիայի պատուիրակութիւնը եւս. իսկ Օրջոնիգիձէն թրքամէտ յանձնարարութիւններ էր ուղարկում Մոսկուա: Համբարձում Տէրտէրեանը վկայում է, որ ինքն ու Լեւոն Զարաֆեանը առաջարկել էին հանդիպել թուրքերի հետ. բայց Շանթը մերժել էր, ասելով, որ նախ իրենք այդ լիազօրութիւնը չունեն եւ յետոյ, ինքը թուրք ջարդարարների հետ բանակցութեան չի նստի:

Մոսկուա էր գտնւում նաեւ վրացիների պատուի-

րակութիւնը: Այդտեղ դժուարութիւն չկար, քանի որ ռուսները վրացիների մասին հաշիւ չունէին թուրքերին տալիք: Յունիս 7-ի համաձայնագրով ընդունւում էր Վրաստանի անկախութիւնը եւ անձեռնմխելիութիւնը:

Լեւոն Շանթի վկայութեամբ, այս բացասական ազդակների խառնակ մթնոլորտում էր, որ Յունիսի վերջերին Չիչերինը ներկայացաւ նոր առաջարկով՝ Նախիջեւանը մնում էր Հայաստանին, Ղարաբաղը Ազրբէյջանին, իսկ Զանգեզուրը վիճելի էր համարւում: Չիչերինը բողոքում էր հազարաւոր բոլշեւիկների գնդակահարման դէմ եւ ազդարարում էր, որ եթէ չդադարեն բռնութիւնները, բանակցութիւնները կը կասեցուեն: Շանթը հեռագիր է յղում Երեւան պատասխան ստանալու համար եւ յատկանշական է, որ հեռագիրը Երեւան է հասնում մէկուկէս ամիս անց՝ երբ արդէն դադարել էին բանակցութիւնները: Համբարձում Տէրտէրեանը վկայում է, որ պատուիրակութեան տրամադրել էին մի ծածկագիր՝ Թիֆլիսի վրայով Մոսկուայից Երեւան կապ հաստատելու: Պարզ է, որ Հայաստանը կամ Երեւանի նահանգը այնքան անկարեւոր ու յետամնաց էր ծարական իշխանութեան օրօք իսկ, որ հեռագրական կապն էլ ուղղակի չէր: Այս թոհուբոհի մէջ, պատուիրակութեան լուր է հասնում, որ Արամայիս Երզնկեանն ու Սիմոնիկ Փիրումեանը հինգ միլիոն ռուբլի ստանալով գաղտնի վերադարձել են Կովկաս՝ Զանգեզուրի ու Ղարաբաղի խորհրդայնացումը արագացնելու համար: Ռազմական օգնութիւնը գալու էր 11-րդ Կարմիր Բանակից:

Քեմալական Թուրքիայի եւ Բոլշեւիկ Ազրբէյջանի ներկայացուցիչները շարունակում էին ճնշել Մոսկուային՝ կասկածի տակ դնելու Հայաստանին

մնացած միակ հողատարածքը՝ Նախիջեւանը, տրամաբանելով, որ Նախիջեւանի մահմեդականները վտանգուած են Հայաստանից եկող անդադար յարձակումներից: Նրանք փորձում էին գրաւել Զանգեզուրը, որ վիճելի էր յայտարարուած եւ հասնել Նախիջեւանի մահմեդականներին:

Բանակցութիւնների անարդիւնք վախճանը - Մոսկուան գաղտնի համաձայնութիւնների եւ առեւտուրի բեմ էր դարձել: Այդ բեմի վրայ թոյլ էր հայկական ազդակը՝ կարողանալու համար հակազդել Ազրբէյջանի, Քեմալական Թուրքիայի, Հայկական Գործերի Կոմիսարիատի եւ հայ եւ այլ անհատ բոլշեւիկների հակահայ քաղաքականութեան եւ քարոզչութեանը: Յուլիսի 1-ին Չիչերինը տեղեկացրեց, որ բանակցութիւնները Մոսկուայում աւարտուած են: Որոշուած է Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամ Բորիս Լեգրանին որպէս լիազօր ներկայացուցիչ ուղարկել Երեւան՝ այնտեղ շարունակելու համար բանակցութիւնները:

Դրանից յետոյ, մի կարճ հանդիպում է տեղի ունենում հայկական պատուիրակութեան, Լեգրանի եւ նրա օգնական Սահակ Տէր-Գաբրիէլեանի միջեւ, որից յետոյ մի ամբողջ ամիս պատուիրակութիւնը սպասում է Երեւանից եկող կարգադրութեան: Մի ուշացած հեռագիր դեռ կարգադրում էր տեղի չտալ եւ պնդել ներկայացուած պահանջների վրայ. իսկ Լեգրանը արդէն թողել էր Մոսկուան: Մի երկրորդ հեռագիր կարգադրում էր բողոք յայտնել ռուսական կողմին, որ Կարմիր Բանակը գրաւել է Զանգեզուրի մայրաքաղաք Գորիսը եւ սպանել դաշնակցական գործիչներ եւ

պառլամենտի անդամներ Վահան Խորենուն եւ Արշակ Շիրինեանին:

Ստալինի Յուլիս 8-ի հեռագիրը Օրջոնիկիձէին բացայայտում է Մոսկուայի կողմնորոշումը.

> Իմ կարծիքն այնպիսին է, որ չի կարելի անվերջ խուսանաւել կողմերի միջեւ, պէտք է սատարել կողմերից մէկին որոշակիօրէն, տուեալ դէպքում, ի հարկէ, Ադրբեջանին Թուրքիայի հետ: Ես խօսել եմ Լենինի հետ, ինքը չի առարկում:

Որպէս հետեւանք, Յուլիս 10-ին Համառուսական Կոմունիստ Կուսակցութեան Կենտկոմը մի բողոքագիր է ստանում Բաքուից ուր Չիչերինի Հայաստանին առաջարկած հողային բաժանումները (Նախիջեւան, Ղարաբաղ, Զանգեզուր) համարւում էր անարդար եւ Կովկասում ծայր առած շարժման հակընդդէմ: Գրութեան մէջ նշուած էր, որ թէ՛ Ղարաբաղի եւ թէ՛ Զանգեզուրի հայ գիւղացիութիւնը ցանկանում է օր առաջ դաշնակների լծից ազատուել: Գրութեան տակ ստորագրել էին Մդիւանին՝ Կաբիւրոյից, Նարիմանովը՝ Ազրբէյջանի Յեղկոմից, Միկոյեանն ու Նանէյշվիլին Կենտկոմից եւ 11-րդ Կարմիր Բանակի ներկայացուցիչներ:

Նոյն ժամանակ երբ հայկական պատուիրակութիւնը դեռ Մոսկուայում էր, Լեգրանը, միշտ Տէր-Գաբրիէլեանի եւ Խալիլ փաշայի հետ, Թիֆլիսում եւ Բաքւում հանդիպումներ էր ունենում: Իթթիհատական Խալիլ փաշան Էնվէրի եղբայրն էր, որ արդէն վաղուց Մոսկուայում իբրեւ Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչ ռուս-թրքական համաձայնութեան վրայ էր աշխատում, որ պիտի չարիք դառնար Հայաստանի համար: Նա

յաջողել էր հաւատացնել Չիչերինին, որ Քեմալական Թուրքիան Թիկունք կը կանգնի Ռուսաստանին եւ հայցում էր օգնութիւն դրամ, զէնք ու զինամթերք Դաշնակիցներին Թուրքիայից հանելու եւ ազգային շարժումը Թուրքիայում տարածելու համար: Խալիլը այդ օգնութիւնն էր իր հետ տանում:

Լեգրանը Բաքւում, Օրջոնիգիձէի ազդեցութեամբ եւ նրա հետ միասին հետեւեալ յանձնարարականն է ստորագրում եւ յղում Մոսկուա Չիչերինին. «Առաջարկում ենք հարցի լուծման հետեւեալ տարբերակը, որը կը գոհացնի Ազրբէյջանին. Ղարաբաղը ամբողջութեամբ եւ անվերապահօրէն միանում է Ազրբէյջանին»: Եւ իրօք՝ Կովկասի ճակատագիրը Բաքւում էր որոշւում: Բաքուն՝ Անգարա-Մոսկուա-Բաքու եռանկիւնու մէջ էր եւ դարձել էր թուրք-բոլշեւիկ-թաթար համաձայնութեան կենտրոն: Լեգրանը այդ ազդեցութեան տակ եւ թրքամէտ Օրջոնիգիձէի խորհրդով էր իր յանձնարարութիւնները կատարում Մոսկուային՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը կցել Ազրբէյջանին եւ Նախիջեւանը գրաւելու համար Կարմիր Բանակը շարժել, առայժմ Հայաստանի հետ որեւէ համաձայնութիւն չկնքել այլ նրանից զինադադար պահանջել:

Զարաշուք զարգացումներ բանակցութիւնների ոլորտում - Վերջապէս, Յուլիս 21-ին Լեգրանը մի մեծ խմբով դէպի Հայաստան է շարժւում, բայց տարօրինակ կերպով նրա մուտքը Հայաստան արգիլւում է: Բիւրօ կառավարութիւնը այլեւս կասկածանքով էր մօտենում բոլշեւիկներին եւ պահանջում էր խմբին սովորական ճամբորդների պէս քննութեան ենթարկել: Հաւատում էր, որ նրանց մէջ բոլշեւիկ ագենտներ կան եւ քարոզչական

նիւթեր են բերում: Լեգրանը վշտացած Թիֆլիս է անցնում: Զինադադարի պահանջը ներկայացւում է այնտեղից: Եւ այսպէս, Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներ, Արշակ Ջամալեանն ու Արտաշէս Բաբալեանը Թիֆլիսում Օգոստոս 10-ին Լեգրանի հետ զինադադար են ստորագրում՝ վերջ դնելու համար վերջին ամսւայ ընթացքում Նախիջեւանում եւ Զանգեզուրում կարմիր Բանակի եւ Նժդեհի եւ Դրոյի ղեկավարութեամբ Հայաստանի զօրքերի միջեւ ընթացող պատերազմին: Բախտի հեգնանքով, այս զինադադարը առաջին փաստաթուղթն էր երկու պետութիւնների մէջ ստորագրուած, որ ենթադրում էր անկախ Հայաստանի ճանաչում Մոսկուայի կողմից: Ըստ այս աղիտալի համաձայնագրի, մինչեւ զինադադարի համաձայնագրի մանրամասնութիւնների ճշտումը, Հայաստանը հրաժարւում էր Ղարաբաղից, Զանգեզուրից ու Նախիջեւանից: Այսպիսով, Ռուսաստանը տալիս էր թուրքերին իր խոստացածը: Երկու շաբաթ առաջ արդէն Կարախանը յայտնել էր Ազգայնական Թուրքիայի ներկայացուցիչ Բեքիր Սամիին, որ Կարմիր Բանակին հրամայուել է Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը գրաւել ի նպաստ Ազրբէյջանի:

Զինադադարի տառին հակառակ, ի հարկէ, Կարմիր Բանակը տեղի չտուեց եւ պարտադրեց Նժդեհին, որ կուում էր Զանգեզուրում, նահանջի ճամբան բռնել: Նժդեհը ամրացաւ Խուստուփի լեռներում ու շարունակեց կռիւը, իսկ Ղափանը խորհրդայնացած յայտարարուեց: Կարմիր բանակին յաջողուեց նաեւ Դրոյին չէզոքացնել Դառալագեազում (Վայոց Ձոր): Իսկ Դաշնակիցները, որ որեւէ օգնութիւն չէին բերել

նման մի աննպաստ արդիւնքի չհասնելու համար, իրենց դժգոհութիւնը յայտնեցին, թէ Հայաստանը Դաշնակիցների թշնամիների հետ համաձայնագիր է կնքում:

Կատակերգութիւն: Նոյն օրը, Օգոստոս 10-ին Փարիզում կնքւում էր Սեւրի դաշնագիրը՝ Հայկական հարցի վերաբերեալ դրական արդիւնքով: Անգլիայից Հայաստան էր հասնում 40 միլիոն pound sterling արժողութեամբ ռազմական օգնութիւն եւ խոստում՝ յաւելեալ օգնութեան: Այս բոլորը աւելի էին ամրապնդում Դաշնակիցներին կապած յոյսերը եւ բոլշեւիկներին ապաւինելն ու նրանց բարեացակամ միջնորդութեան վստահելը աւելի վտանգաւոր էր դառնում: Այստեղ պիտի շեշտել, որ ռազմական օգնութիւնը, ըստ Արտաշէս Բաբալեանի, Անգլիայի Կովկասեան ուժերի յանձնարարութեամբ էր հասնում, եւ դա ի հատուցում Հայաստանի կառավարութեան՝ բոլշեւիկների ապստամբութիւնը յաջողութեամբ սաստելու համար:

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԻՋԵԻ

Հայկական պատուիրակութիւնը Երեւան էր վերադարձել այն համոզումով, որ Հայաստանը պիտի Մոսկուայի հետ համաձայնութեան գայ՝ թէկուզ զիջումների գնով: Եւ դա կարծես միակ ճամբան էր: Բայց Հայաստանը արդէն երկու կրակի մէջ էր յայտնուել՝ կարմիր Բանակը Իջեւանից եւ Նախիջեւանից, իսկ թուրքերը արեւմուտքից:

Վերջապէս, թէ՛ ռուսական եւ թէ հայկական կողմերի յետաձգումներից յետոյ, Հոկտեմբեր 11-ին Լեգրանը Հայաստան է մտնում մի մեծ խումբ ազրբէյջանցի եւ հայ բոլշեւիկների ընկերակցութեամբ: Նա Հայաստան էր եկել ո՛չ թէ բանակցութիւնները վերսկսելու, այլ պահանջելու Հայաստանի կառավարութիւնից հրաժարուել Սեւրի դաշնագրից եւ ընդունել Մոսկուայի իշխանութեանը որպէս իրաւարար Հայաստանի սահմանները որոշելու: Նա նոյնպէս պահանջում էր արտօնել կարմիր Բանակին Հայաստանի միջով անցնելու Քեմալի զօրքերին հասնելու համար: Կառավարութիւնը միակարծիք չէր: Որոշները առաջարկում էին բացարձակապէս մերժել առաջարկները: Ուրիշների կարծիքով պէտք

էր լեզու գտնել Սովետների հետ եւ համաձայնութեան հասնել: Բանակցութիւնները շարունակուեցին: Տէր-Գաբրիելեանը Համբարձում Տէրտէրեանին գաղտնաբար ասել էր, թէ եթէ Հայաստանը մերժի վերջնագրի պայմանները, որոշում կայ ռազմական գործողութիւն սկսել նրա դէմ:

Բանակութիւնների ընթացքում մի քիչ մեղմացան պայմանները: Սովետները ընդունում էին Կարսն ու Ալեքսանդրապոլը թողնել Հայաստանին եւ Հայաստան-Ազրբէյջան վիճելի հողերի խնդիրը լուծել յետագայում հանրաքուէի միջոցով:

Կաբիւրոյի ճակատագրական դերը - Լեգրանը համաձայնագրի այս տարբերակը առած վաւերացման համար Մոսկուա գնալու փոխարէն Բաքու է մեկնում ուր տեղի էր ունենում Կաբիւրոյի համագումարը (1920թ., Նոյեմբեր 4), ուր եւ ներկայ էին նաեւ Ստալինն ու Օրջոնիգիձէն: Համաձայնագիրը մերժւում է առանց այլեւայլի: Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամ Շաւարշ Ամիրխանեանը ելոյթ ունենալով յայտարարում է, թէ Հայաստանի վիճակը շատ ծանր է: Որոշ շրջաններում կառավարութիւն գոյութիւն չունի եւ ժամանակը հասունացել է երկիրը անմիջապէս խորհրդայնացնելու: Փակագծի մէջ նշենք, որ Շաւարշ Ամիրխանեանն ու Աւիս Նուրիջանեանը անձամբ վերահսկեցին 1921թ. Փետրուար 16-18-ի բանտարկուած նախկին ղեկավարների կացնահարումը: Ամիրխանեանի առաջարկը ընդունւում է անմիջապէս, եւ համաձայնագրի փոխարէն ուղարկւում Ջիչերինին առ ի վաւերացում:

Իրականութեան մէջ, թուրք բանակը արդէն գրաւել էր Կարսն ու Ալեքսանդրապոլը, երբ Երեւանում եւ Անգարայում ստացուեց Ջիչերինի հեռագիրը՝ իր ներկայացուցիչ Բուդու Մդիւանիին ընդունելու որպէս միջնորդ արիւնհեղութեանը վերջ տալու համար:

Հայ բոլշեւիկների կործանիչ գործողութիւնները – Հայ բոլշեւիկները վճռականօրէն պայքարում էին Դաշնակցութեան դէմ: Ամբողջ Ռուսաստանում մտքեր պատրաստում, կարծիք ձեւաւորում: 1920-ի Սեպտեմբեր 1-ին Բաքուում կայացած Արեւելեան Ազգերի Համագումարին հանուած բանաձեւերից մէկում կարդում ենք, «Դաշնակցութիւնը, «Բանդիտ-մաուզերիստների օգնութեամբ .... թաղեց Թուրքահայաստանի աշխատաւոր գիւղացիութիւնը եւ .... նոր Գողգոթա է կառուցում անդրկովկասեան Հայաստանի բանուորա-գիւղացիական մասսաների համար»: Համագումարին մասնակցում էին հայ բոլշեւիկներ՝ Կասեան, Նուրիջանեան, Միկոյեան, Մռաւեան եւ ուրիշներ:

Բացի պաշտօնական խողովակով կատարուող ճնշումներից, չափազանցուած զեկոյցներից եւ «յանձնարարութիւններից», հայ բոլշեւիկները բանակի մէջ էին մտել՝ հայրենիքի պաշտպանութեան ոգին ջարդելու զինուորների մէջ եւ վիժեցնելու ռազմական գործողութիւնները ճակատներում: Թուղթիկներ էին ցրում ժողովրդի մէջ, կրակոտ ճառեր արտասանում, քաջալերում էին չհպատակուել կառավարութեան զօրակոչին, չզինուորագրուել: Համոզում էին ժողովրդին, որ քեմալական զօրքերը թալանողներ ու մարդասպաններ չեն, այլ մեր «եղբայրներ»ն

են, մեզ պէս պարզ բանուորներ ու գիւղացիներ, որոնք գալիս են Հայաստանը դաշնակների լծից ազատագրելու: Բանակի մէջ քաջալերում էին զինուորներին զէնքերը ցած դնել: Նրանք նոյնիսկ Կարսում հայկական պաշտպանութեան գաղտնիքներն էին փոխանցում թուրքերին յուսալով, որ թուրքերը Կարսը կը գրաւեն եւ կը յանձնեն բոլշեւիկներին: Ալեքսանդրապոլի բոլշեւիկեան յեղափոխական կոմիտէի ներկայացուցիչ Նուշիկ Զաւարեանը կարմիր դրօշով թուրք զինուորներին ընդառաջ էր գնացել: Դրօշի վրայ արձանագրուած էր՝ «Ողջո՛յն թուրք ազատարար բանակին, որ գալիս է ազատելու մեզ դաշնակցականների դժոխքից»:

Բոլշեւիկները քաղցած ժողովրդին հաւատացնում էին, որ եթէ Հայաստանը խորհրդայնանայ հացու շաքարով կը լեցուի: Վերջերս բացայայտուած եւ 1920թ. Սեպտեմբեր 20-ին Հայաստանի Կոմկուսի կողմից Բաքուից Հայաստան յղուած «Ցոյժ գաղտնի» վերնագրուած մի գրութիւն խօսում է գաղտնի ծրագրի մասին.

> Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է եւ պայքարում է իր ազգային ազատութեան համար՝ ընդդէմ իմպեռիալիզմի: Հանրապետական Հայաստանի յաղթանակը Թուրքիայի վրայ կը նշանակի իմպեռիալիզմի ուժեղացումը Մերձաւոր Արեւելքում եւ կը վտանգի յեղափոխութեան յաղթանակը Անդրկովկասում, ապա նաեւ Արեւելքի խորհրդայնացումը: Հայ բոլշեւիկ կոմունիստների խնդիրը պէտք է լինի՝ արագացնել Հանրապետական Հայաստանի պարտութիւնը, որով եւ կարագացուի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պէտք է

> Ա. Կազմալուծել հայկական բանակը...
> Բ. Կազմակերպել դասալքութիւն եւ ամէն կերպ խանգարել զօրահաւաքին.
> Գ. Ռազմաճակատներում հասկացնել զինուորներին, որպէսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինուորների վրայ, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք.
> Դ. Ջենթարկուել սպաների հրամաններին եւ յարկ եղած դէպքում ոչնչացնել նրանց:

Գրութիւնը ստորագրել էին Ս. Կասեան, Ա. Մռաւեան, Ա. Նուրիջանեան, Շ. Ամիրխանեան, Ի. Դովլաթեան, Ա. Յովհաննիսեան եւ յանձնարարել «Գրութիւնը կարդալ սահմանափակ ժողովում եւ կարդալուց յետոյ անմիջապէս այրել»:

Տարբեր կողմերից ի գործ դրուած ճնշումների տակ, Հայաստանի իշխանութիւնը ազատ էր արձակել Ալեքսանդրապոլում բանտարկուած բոլշեւիկներին՝ պայման դնելով, որ հակակառավարական գործունէութիւն չտանեն: Սակայն, բանտից դուրս գալուն պէս, Ալեքսանդրապոլում պետական հարուած էին յայտարարել, որպէս թէ Ալեքսանդրապոլի դաշնակցական կառավարութիւնը դուրս է մղուել: Պետական հարուածը ի հարկէ չէզոքացուեց, բոլշեւիկ ղեկավարները շպրտուեցին երկրից: Այդ գործն էլ կառավարութիւնը վստահել էր Սեպուհին եւ իր ֆիդայական խմբին:

Իսկ Զանգեզուրի պաշտպանութիւնն էլ քանդելու եւ Գարեգին Նժդեհի կամքը կոտրելու համար, կարմիր Բանակի հրամանատար Սմիրնովը Նոյեմբեր 26-ին լուր է ուղարկում Նժդեհին՝ զէնքերը ցած դնել քանի որ Հայաստանը խորհրդայնացած է արդէն եւ

իմաստ չունի կռիւը շարունակել:

Այստեղ հարց է ծագում, հարց որ Բուքրեշի խորհրդաժողովում էլ բարձրացուեց: Ինչո՞ւ Բիւրո-կառավարութիւնը Մայիսեան ապստամբութիւնը զսպելուց յետոյ չհրաժարուեց: Եւ աւելին, ի՞նչն էր պատճառը, որ Բոլշեւիկների քարոզչութիւնը այդքան արագ էր տարածւում եւ հակա-կառավարական միտումները արմատ էին նետում երկրում: Ի հարկէ, պարզ է, որ Հայաստանի տնտեսական աննախանձելի վիճակը, աղքատութիւնը, սովը, անգործութիւնը, համաճարակ հիւանդութիւնները եւ թուրք զօրքերի վախը պատճառներ էին, բայց եթէ կառավարութիւնը այդքան դաշնակցական շեշտ չունենար, աւելի ընդունելութիւն չէ՞ր գտնի երկրում:

Դէպքերը արագ ընթացք էին բռնել: Նոյեմբեր 28-ին, 11-րդ Կարմիր Բանակից հայերից բաղկացած մի զօրամաս է կազմւում եւ դրւում է Ռեւկոմի նախագահ Աւիս Նուրիջանեանի տրամադրութեան տակ՝ «յատուկ գործ»ի համար:

Թրքական բանակի սպառնալի յառաջխաղացքը - թուրքական ճակատում հայկական բանակը ծանր կորուստներ էր տալիս: Թուրքերի անդադար յառաջխաղացքը կանգնեցնելու համար կառավարութիւնը պարտաւոր էր մինչեւ վերջնական լուծում, Նոյեմբեր 18-ին զինադադար ստորագրել, միաժամանակ, օգնութեան աղերսներ ուղղելով Արեւմտեան ուժերին, որոնք կարծես լրիւ անտարբերութեան էին մատնել Հայաստանի ճակատագիրը:

ՀՅԴ տասներորդ Ընդհանուր ժողովը (1924-25), այս հարցում էլ քննադատեց Բիւրո-կառավարութեան

ռազմավարութիւնը, որ թերագնահատել էր թշնամու ուժը եւ գերագնահատել էր հայկական բանակի կարելիութիւնը, եւ որ բոլոր հնարաւորութիւնները, մանաւանդ՝ դիւանագիտական մարզում չէր օգտագործել: Յատկապէս այս բնագաւառում, սակայն, բարդ էր կառավարութեան իրավիճակը, քանի որ թուրքերին մօտենալու իւրաքանչիւր քայլ պիտի համոզիչ ու մարսելի լինէր թէ՛ ղեկավարութեանը, թէ՛ ժողովրդին: Երեւանում հրատարակուող Դաշնակցութեան օրգան «Յառաջ»ը փորձում էր բացատրել, թէ դա խաղաղ համակեցութեան հասնելու միակ ճանապարհն է:

Յաջորդ եօթանասուն տարիներում խորհրդահայ պատմագրութիւնը այս մօտեցումը մեկնաբանեց իբրեւ Դաշնակութեան թուրքական օրիենտացիա ու պախարակեց նրան: Բանն այն է, որ այդպիսով փորձ էր արւում թաքցնել թուրք-ռուսական համաձայնութիւնն ու համագործակցութիւնը Հայաստանի անկախութեան դէմ: Բանն այն է, որ այն օրերին բոլշեւիկ քարոզչութիւնն էր, որ թուրքերին բարեկամ էր ներկայացնում:

Ռուս-թրքական համաձայնութիւնը ի գործ էր դրւում կատարեալ անվստահութեան մթնոլորտում, կարծես երկու կողմերը հսկում էին մէկը միւսի վրայ որ խաղը դէպի իր շահերը չշեղի: Որպէս նախաքայլ, ռուսները կազմակերպում են թուրք բոլշեւիկներից կազմուած խմբի յարձակում Հայաստանի վրայ: Խումբը ղեկավարում էր Մուսթաֆա Սուֆին, որ ռուսների միջնորդութեամբ ազատուել էր Անգարայի բանտից եւ Ազրբէյջան փախել: Այս յարձակումով, Մոսկուան նպատակ ունէր քեմալականներից աւելի շուտ հասնել Հայաստան, որպէսզի նրանք Հայաստանի վրայով չգան միանալու Անդրկովկասի արդէն խորհրդայնացած

թաթարներին: Սա Մոսկուայի համար անպատուութիւն կլինէր:

Խաղադաշտի միւս կողմում, Քեմալականները մերժում էին Մդիւանու միջնորդութիւնը Ալեքսանդրապոլի հայ-թրքական բանակցութիւններում: Բայց Հայաստանի իշխանութիւնը ընդունելով Մոսկուայի առաջարկը, իր պատուիրակութիւնն էր յղել Ալեքսանդրապոլ, ի հարկէ Մդիւանու ընկերակցութեամբ: Պատուիրակութեան անդամ Վահան Մինախորեանը գրում է թէ Քիազիմ Կարաբեքիրը ասել էր «մեր բարեկամութիւնը ռուսների հետ ժամանակաւոր բնոյթ ունի, քանի որ երկուսի միջեւ շատ հին հաշիւներ կան եւ Ռուսաստանի վտանգը Թուրքիայի համար միշտ ներկայ է»:

Նոր կառավարութիւն - Բանակցութիւններից մէկ օր առաջ, Նոյեմբեր 23-ին, Բիւրօ-Կառավարութիւնը իր հրաժարականն է ներկայացնում: Նոր Վարչապետ Սիմոն Վրացեանը, նոր յարձակումներն ու կոտորածները կանխելու համար պարտադրւում է կատարելու բանակցութիւնները սկսելու թուրքերի դրած նախապայմանը եւ յայտարարում է, թէ Հայաստանը հրաժարւում է Սեւրի Դաշնագրից: Իսկ Երեւանում Նոյեմբեր 9-ից բանակցութիւնների նստած Լեգրանը թուրքերի վտանգը կանխելու համար առաջարկում էր խորհրդայնացում, նոյնիսկ խոստանում էր Կարմիր Բանակը թուրքերի դէմ ուղարկել Խորհրդային Հայաստանը պաշտպանելու համար: Կառավարութիւնը չընդունեց Կարմիր Բանակի մասնակցութիւնը, դա համարելով երկրի գրաւումը ռուսների կողմից: Իսկ Ալեքսանդրապոլում, Մդիւանին դուրս մնալով բանակցութիւններից իր ժամանակը օգտագործում

էր տեղի հայ բոլշեւիկների հետ խորհրդայնացման նախապատրաստական աշխատանք կատարելով:

Հայաստանի խորհրդայնացման դէմ միակ արգելքը Դաշնակցութիւնն էր որ դեռեւս ուժի վրայ էր: Այդ ուժը քանդելու համար Լեգրանը սկսեց ներսից խլրտումներ առաջացնել ղեկավարութեան եւ շարքերի մէջ: Նա իր գաղափարները կիսող մի քանի դաշնակցականներ գտաւ, ովքեր իրենց ձախ դաշնակցականներ էին կոչում: Հայկ Աւալեանը ղեկավարում էր այդ խումբը, որ մօտեցել էր Լեգրանին, նոյնիսկ խոստացել ձերբակալել իշխանութեան դաշնակցական անդամներին, եւ եթէ պէտք է խորհրդայնացումից յետոյ գնդակահարել նրանց: Բացի ձախ դաշնակցականներից, պառլամենտի որոշ անդամներ եւս համամիտ էին Հայաստանի շուտափոյթ խորհրդայնացման հետ, որպէսզի Հայաստանը այս շփոթից անարիւն անցնի: Այս խումբը նոյնիսկ աշխատանք էր տանում ապահովելու խորհրդայնացումից յետոյ Հայաստանի անկախ իրավիճակ եւ բոլշեւիկ-դաշնակցական համագործակցութիւն: Բայց խումբը Աւալեանի ծայրայեղական կեցուածքին հանդիպելով յետ է քաշւում եւ մինչեւ Փետրուարեան Ապստամբութիւն անգործուն է մնում:

ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

Ռիչարդ Յովհաննիսեանի կարծիքով, Լեգրանը Հայաստանը Խորհրդայնացնելու քաղաքականութիւն էր վարում՝ բայց փորձում էր դա իրագործել Երեւանի կառավարութեան համաձայնութեամբ: Նա խուսափում էր ուժի դիմելուց՝ Դաշնակիցներին միջամտելու առիթ չտալու համար: Իսկ Արմռեւկոմը (Հայաստանի Յեղափոխական Կոմիտէ), որ կազմուել էր Նոյեմբերի կէսերին Սարգիս Կասեանի ղեկավարութեամբ, շտապում էր:

Օրջոնիգիձէի հաւանութեամբ եւ Կարմիր Բանակի հայկական զօրամասի օգնութեամբ, Արմռեւկոմը Նոյեմբեր 29-ին Իջեւանից կտրում է սահմանը եւ Հայաստանը խորհրդայնացած յայտարարում: Ներխուժողները յայտարարում էին, որ Կոմունիստ Կուսակցութիւնը ժողովուրդների փրկիչ Կարմիր Բանակի օգնութեամբ եկել է կեղեքիչ դաշնակների լուծից ազատելու հայ ժողովրդին եւ ջախջախելու Դաշնակիցների այս վերջին ամրութիւնը Կովկասում: Երբ Սիմոն Վրացեանը եղածի դէմ բողոքում է Լեգրանին: Լեգրանը պատասխանում է, թէ թիւրիմացութիւն է եղել եւ ներողութիւն է խնդրում:

Որոշւում է զօրք ուղարկել ներխուժողներին յետ մղելու համար: Նոյնիսկ Բոբռիշչեւը ընկերակցում է զօրքին հսկելու համար ներխուժողների նահանջը: Բայց մի քանի հարիւր զինուոր հազարներ հաշուող բանակի դէմ չի դիմանում, յանձնւում է եւ միանում յեղափոխականներին: Այլեւս հնարաւոր չէր յետ դարձ կատարել: Մոսկուայի կարգադրութեամբ Լեգրանը Նոյեմբեր 30-ին վերջնագիր է ներկայացնում Վրացեանին՝ անմիջապէս խորհրդային կարգերը ընդունելու:

Ծանր մտահոգութիւններ արտացոլող խորհրդակցական ժողով - կառավարութիւնը երկու կողմից ճնշման տակ էր: Թէ՛ թուրքերը եւ թէ՛ կոմունիստները պարտադրում էին անմիջապէս ընդունել իրենց պայմանները եւ սպառնում էին՝ հակառակ դէպքում սոսկալի արդիւնք: Կացութիւնը վերլուծելու եւ լաւագոյն լուծումը գտնելու համար խորհրդակցական ժողով է հրաւիրւում: Մասնակցում են Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիան, Բիւրոյի անդամները, կառավարութեան նախկին եւ ներկայ անդամները եւ մի քանի դաշնակցական ղեկավարներ:

Լուծման երկու ճամբայ կար: Որոշները հաւատացած էին, որ պէտք է անմիջապէս երկրի ղեկը յանձնել սովետներին՝ այդպիսով թուրքերի յառաջխաղացքը կասեցնելու եւ նոր կոտորածների առաջն առնելու համար: Ի հարկէ, ձախ դաշնակցականները այս խմբի մէջ էին: Միւսների կարծիքով պէտք էր շարունակել կռուել, քանի որ սովետները թուրքերի դէմ չեն պաշտպանի Հայաստանը եւ առաջացրած խլրտումներով աւելի կը թուլացնեն երկիրը: Այս վերջինները հաւատացած

էին որ կարելի է համաձայնուել թուրքերի հետ եւ նոյնիսկ նրանց օգնութեամբ պայքարել բոլշեւիկների դէմ: Այս կարծիքը պաշտպանող դաշնակցական գործիչները ճիշտ էին նախատեսել: Խորհրդային Ռուսաստանը պատրաստ չէր Հայաստանը թուրք բանակի դէմ պաշտպանելու: Հայաստանի Ցեղկոմի անդամ Ասկանազ Մռաւեանը տեղեկացնում էր արդէն խորհրդայնացած Հայաստանի Արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադեանին,

> Լենինը ասում է, որ Ռուսաստանը չի կարող եւ չի ուզում կռուել թուրքերի դէմ.... Լենինը ասում է, որ «Մենք ժամանակաւորապէս զոհաբերում ենք հայ աշխատաւորութեան շահերը համաշխարհային յեղափոխութեան շահերին.... Մենք չենք պատրաստւում Հայաստանի համար կռուել որեւէ մէկի դէմ, յատկապէս՝ Քեմալի»:

Խորհրդակցութիւնը դեռ ընթացքի մէջ էր երբ Ալեքսանդրապոլից հեռախօսում է Խատիսեանը եւ յայտնում, որ թուրքերը որեւէ զիջում չեն ընդունում եւ դրուած սոսկալի պայմանները մնում են անփոփոխ: Սա շրջում է նժարը: Պարտադրուած պայմաններով թուրքերի հետ համաձայնութիւն նշանակում էր թուրքերից կախեալ կոտորակուած Հայաստան: Սովետներին յանձնուելը միակ ճամբան էր մնում: Բիւրոն որոշում է այդ լուծումին գնալ եւ թողնել երկիրը որպէսզի իշխանութեան փոխանցումը սահուն կատարուի: Կառավարութիւնը հրաժարւում է: Կազմւում է անցումային կառավարութիւն՝ Դրոյի եւ Համբարձում Տէրտէրեանի մասնակցութեամբ:

Հայաստանի խորհրդայնացման ընթացքը - Դեկտեմբեր 1-ին սկսում են խորհրդայնացման բանակցութիւնները: Կազմւում է «Խորհրդայնացման աքտ» փաստաթուղթը եւ ներկայացւում է Դաշնակցութեան: Համաձայնագիրը կնքւում է Դեկտեմբեր 2-ի կէսօրից յետոյ ժամի 2-ին: Նոյն օրը ժամի 6-ին կառավարութիւնը յանձնւում է: Դրոն դառնում է գերագոյն կոմիսար եւ պատերազմի նախարար, իսկ Ռուսաստանի ներկայացուցիչ Սիլինը նշանակւում է Հայաստանի կոմիսար: Որպէս հանրապետութեան ներկայացուցիչ, Դրոն հեռախօսում է Խատիսեանին եւ յայտնում իշխանութեան անկման մասին. իսկ թուրքերի հետ համաձայնագիր ստորագրել կամ մերժելը թողնում է նրա որոշմանը:

Դեկտեմբեր 3-ի լոյսը չբացուած թուրքերի ճնշման տակ, Խատիսեանը, արդէն հրաժարուած կառավարութեան անունից ստորագրում է համաձայնագիրը: Այնտեղ նշուած էր, որ համաձայնագիրը ուժի մէջ է մտնում Հայաստանի խորհրդարանի եւ Թուրքիայի Ազգային ժողովի վաւերացումից յետոյ: Այս պայմանը երբեք չկատարուեց: Խորհրդային իշխանութիւնը կարող էր այս խախուտ համաձայնագիրը բոլորովին էլ մերժել, եւ իրապէս էլ անարժէք փաստաթուղթ էր դա: Բայց իշխանութիւնն ու խորհրդահայ պատմագրութիւնը այդ առիթը օգտագործեցին քննադատելու եւ պախարակելու Դաշնակցութեան եւ սերունդների մտքում սերմանելու այն գաղափարը, թէ Դաշնակցութիւնը երկիրը ծախեց թուրքերին:

Այս համաձայնագիրը հրատարակուած է «Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Ռեւոլիւցիան եւ Սովետական Իշխանութեան Յաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու»

1960-ին հրատարակուած հսկայ հատորում: Բայց այնտեղ չկայ խորհրդայնացման համաձայնագիրը: Հետաքրքիրն այն է, որ նախապէս հրատարակուած այս հատորի ռուսերէն տարբերակում այդ փաստաթուղթը ներառուած է եղել եւ գրաքննութիւնը դա դուրս է բերել հայերէն տարբերակից: Պէտք չէր, որ Խորհրդային Հայաստանի քաղաքացին իմանար, որ համաձայնագրի մէջ ամրագրուած պայմաններից եւ ո՛չ մէկը բոլշեւիկները չկատարեցին: Հայաստանը պիտի շարունակէր մնալ անկախ սովետական սոցիալիստական հանրապետութիւն, որ պիտի յարատեւէր նախկին Երեւանի գուբեռնիայի, Կարսի մի մասի, Զանգեզուրի, Ղարաբաղի մի մասի, Կազախի եւ նախկին Թիֆլիսի գուբեռնիայի այն մասի վրայ որ մինչեւ 1920-ի Սեպտեմբեր 28 Հայաստանին էր պատկանում: Նաեւ, Կարմիր Բանակի օգնութեամբ՝ թուրք բանակը յետ պիտի մղուէր մինչեւ պատերազմից առաջուայ սահմանները: Պարզ է, որ դրանք թղթի վրայ մնացին միայն:

Շարունակուող պայքար Դաշնակցութեան դէմ - Հայ բոլշեւիկները յաջողեցին Դաշնակցութեան դէմ անզիջող պայքարում: Արխիւները լեցուն են նրանց նամակներով, զեկոյցներով եւ կործանիչ գործունէութեան արձանագրութիւններով: Պայքարը շարունակուեց խորհրդայնացումից յետոյ եւս: 1920 թ.Դեկտեմբեր 20-ին Աւիս Նուրիջանեանը յայտարարում էր,

> Դաշնակների դէմ ամենաանգութ պատերազմը մեր յեղաշրջման գլխաւոր նպատակն է: Թուրքերի մօտ ամրապնդուած համոզմունքը դաշնակների վերաբերեալ չափազանց ամուր է նրանց ոչնչացնելու համար:

Պատմութեան մեկնաբանման այս իւրայատուկ մեթոդը եւ Դաշնակցութեան հասցէին ուղղուած որակումներն արմատ նետեցին ու մտայնութիւններ ստեղծեցին:

Հայ բոլշեւիկները յաջողեցին ընդհանրապէս ազգային Հայաստանի դէմ պայքարում եւս: Սփիւռքացած հայը դեռ հայահաւաք ու հողահաւաք էր երազում: 1926-ին, ինչպէս «Խաւարում» գրքոյկն է որակում «ինքնամոռաց հայ բոլշեւիկ» Արտաշէս Կարինեանը գրում էր,

> Պէտք է վերջ տալ հայութեան հաւաքման գաղափարին Հայաստանում, մի գաղափար, որ մինչեւ այժմ էլ ապրում է ժողովրդական զանգուածների գիտակցութեան մէջ: Հողային ֆոնդի բացակայութիւնն է պատճառը, որ զարգանայ ազգայնական ռոմանտիկան եւ հայութիւնը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին», ինչպէս նաեւ վառ ու կենդանի պահի «միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարը»: Ուստի, անհրաժեշտ է նախ՝ ա. վերջ դնել հայութեան հաւաքման գաղափարին Հայաստանի մէջ եւ ապա՝ բ. երկրի մէջ եղած 300.000 արեւմտահայ գաղթականութեանը ցրել լայնածաւալ Ռուսաստանի մէջ:

Հայաստանը խորհրդայնացաւ, բայց խոստացուած ալիւրն ու շաքարը չհասաւ, ընդհակառակը՝ Ամերիկայից ուղարկուած տոննաներով ալիւրը քաղցած ժողովրդին զրկելով նուէր ուղարկուեց Մոսկուա: Դաշնակցական ղեկավարներին ու բանակի սպաներին խոստացուած ապահովութիւնը չյարգուեց ու բանտերը լեցուեցին

անմեղ զոհերով: Իսկ երկրի տնտեսութիւնը հիմնուեց բնակչութիւնից խլուած շարժ ու անշարժ գոյքերի եւ ձեռնարկութիւնների վրայ: Իսկ յետագայ թուրք-ռուսական համաձայնութիւնների արդիւնքում, անկախ հանրապետութեան օրօք շուրջ 100.000 ք.ք.-ի հասած հողատարածքը 30.000-ի իջեցուեց:

ՎԵՐՋԱԲԱՆ

Թշնամական վերաբերմունքը Դաշնակցութեան հանդէպ շարունակուեց ամբողջ խորհրդային տիրապետութեան ժամանակաշրջանում: Այդ վերաբերմունքը թելադրեց Խորհրդային Հայաստանի հերթական ղեկավարների քաղաքականութիւնը Սփիւռքի նկատմամբ՝ բացարկել Սփիւռքի այն հատուածին, այն կազմակերպութիւններին ու կառոյցներին, որոնք Դաշնակցութեան են համակրում կամ հետեւում: Մերժել նրանց հետ որեւէ կապ կամ համագործակցութիւն:

Խորհրդահայ պատմաբանները խեղաթիւրեցին պատմութիւնը, որովհետեւ ինչպէս Լենդրուշ Խուրշուդեանն էր բացատրում, «Հասկանալի է, որ բռնի ուժով իշխանութեան գլուխ եկած բոլշեւիկների պատմագրութիւնը յենուած էր սխալ եւ անընդունելի ելակէտների վրայ: Այդ պատմագրութեան առանցքը եղել է պատմութեան կեղծարարութիւնը»:

Դեռ աւելին, խորհրդահայ պատմագրութիւնը փորձեց արդարացնել ու հերոսացնել ազգային գաղափարախօսութիւնը ինտեռնացիոնալիզմին զոհ տուած ու երկիրը Մոսկուայի տէրերին ծախած

ու յետագային էլ նրանց ծառայութեան մէջ մտած հայ բոլշեւիկներին: Այդ Կոմունիստ հերոսների արձանները կանգնեցուեցին երկրի ամբողջ տարածքում (1990-ականներին հանուեցին Լենինի, Ստալինի, Մեշադի Ազիզբեկովի, Ղուկաս Ղուկասեանի եւ մի քանի այլ «հերոսների» արձանները): Նրանց անուններով գիւղեր ու փողոցներ կոչուեցին (դրանցից մի մասը վերանուանուել է վերջին տարիներին):

Սերունդների մէջ սրսկուած էր ատելութիւն դէպի Դաշնակցութիւնը: Ու երբ պէտք եղաւ հայ ժողովրդի ազգային ջիղը շարժել ու ասենք Ղարաբաղեան շարժման համար օրինակելի ազգային հերոսներ փնտռել, մեր ազատագրական պայքարից ընտրուեցին նրանք, ովքեր իրենց դժուարին կեանքի ընթացքում մի բանից կամ մէկից վշտացած մի ծուռ խօսք էին ասել Դաշնակցութեան հասցէին: Եւ քանի որ դրանց թիւը բաւական չէր, յիշուեցին անուններ ու գործեր առանց նրանց պատկանած կուսակցութիւնը յիշատակելու:

Իսկ հիմա, արդէն շուրջ երեք տասնամեակ անկախութիւն ապրող Հայաստանում ու նոյնիսկ արտագաղթած զանգուածներում դեռ լիովին չի փոխուել 70 տարի արմատ նետած մտայնութիւնը. իսկ այն արմատախիլ անելու համար գիտակցուած աշխատանք է պէտք՝ ի սէր միութեան եւ ազգային նպատակների իրագործման, ի սէր ազգային պատմագրութեան, որ դեռ գրի պիտի առնուի ու յաւիտենականութեան յանձնուի: Ինչպէս Լենդրուշ Խուրշուդեանն է բնութագրում, «Ազգային ակադեմական պատմագրութիւն, որ բխում է ազգային գաղափարախօսութիւնից եւ դասաւանդւում է ազգային դպրոցում եւ բուհում.... Ծաւօք, այդ

ազգային, ակադեմական պատմագրութիւնն է, որ հայ ժողովուրդը դեռ չի ստեղծել»: Շուրջ երկու տասնամեակ է անցնում Խուրշուդեանի այս հաստատումներից, որ կատարել է «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, 1917-1921» իմ աշխատութեան նախաբանում: Ի հարկէ, դաշտը անարգասիք չի մնացել: Հայաստանի երիտասարդ պատմաբանները անսակարկ ու կորովագին խորանում են հայ ժողովրդի պատմութեան այս բարդ ժամանակաշրջանի ուսումնասիրութեան մէջ՝ օգտագործելով թէ՛ խորհրդային տարիների բացայայտուած ու չբացայայտուած աղբիւրները եւ թէ՛ վերջին դարում Սփիւռքում ստեղծուած հարուստ պատմագրութիւնը:

Ճանապարհին ենք: Եւ գիտենք, որ պէտք է բաց ճակատով եւ առարկայականօրէն նայել անցեալին՝ հասնելու համար հայոց ազգային գաղափարախօսութիւնից բխած ազգային, ակադեմական պատմագրութեան, ուր պիտի բացայայտուեն թերութիւնները, սխալներն ու սայթաքումները՝ երբեք չկրկնելու համար. պիտի բացայայտուեն յաջողութիւններն ու ձեռքբերումները՝ ուղեցոյց դառնալու համար մեր երկարածիգ ապագային:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՑԱՆԿ

Ահարոնեան Աւետիս, «Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան», (1948).

Բաբալեան Արտաշէս, «Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն» (1923).

---------, «Մի տարի գերութեան մէջ» (1924).

Լենին Վլադիմիր, «Երկեր» հատոր 51 (1969).

«Խաւարում», Յովհաննէս Թումանեանի տունթանգարանի աստիճաններին բացուած «Լուստրացիա»ի արգիլման առիթով հրատարակուած գրքոյկ (2017).

Խատիսեան Ալեքսանդր, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» (1968).

Խուրշուդեան Լենդրուշ, «Սովետական Ռուսաստանը եւ Հայկական Հարցը» (1977).

---------, «Հայկական Հարցը» (1995).

Կարապետեան Յովհաննէս, «Մայիսեան ապստամբութիւնը Հայաստանում» (1961).

Հայաստանի Ազգային Արխիւ, Երեւան.

ՀՅԴ Աշնակցութեան Արխիւ, Բոսթոն.

Ղազախեցեան Վ., «Հայաստանի Հանրապետութիւնը, 1918-1920 թթ., Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու» (2000).

Մնացականեան Ա. Ն., «Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ ռեւոլիւցիան եւ սովետական իշխանութեան յաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու» (1960).

Յովհաննիսեան Ռիչարդ – հինգ հատորները՝ *Armenia on the Road to Independence, 1918* (1967), *The Republic of Armenia,* vol. I-IV (1971, 1982, 1996, 1996).

Շահումեան Ստեփան, «Երկեր» 3-րդ հատոր (1958).

Շաքերի Խոսրօ, *Le premier congres des peuples de l'Orient* (Baku, 1920) (1982).

«Ռոստոմ», (1979).

Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», է հատոր (1952).

Սիւնի Ռանըլդ Գրիգոր, *The Baku Commune, 1917-1918*, (1972).

Վրացեան Սիմոն, «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ» (1941).

---------, «Հայաստանի Հանրապետութիւն» (1982).

Տէր-Մինասեան Անահիտ, *La question armenienne* (1983).

Տէրտէրեան Համբարձում, «Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լեւոն Շանթի պատուիրակութիւնը» (1954).

Յարութիւնեան Վլադիմիր, «Փաստաթղթեր Հայաստանի Հանրապետութեան քաղաքական պատմութեան, Հայ բոլշեւիկների հակապետական գործունէութիւնը, 1919-1920թթ.» (Modus Vivendi, 2014).

----------, «Փաստաթղթեր Հայաստանի Հանրապետութեան

քաղաքական պատմութեան, Կարսի մարզը Հայաստանի Առաջին Հանրապետութեան կազմում» (Modus Vivendi, 2016).

Փիրունեան Ռուբինա, «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, 1917-1921» (1997).

Քազեմզադեհ Ֆիրուզ, *The Struggle for Transcaucasia (1917-1918)* (1951).

Քիւրքճեան Յարութիւն, «Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան, 1919-1924» (1988).

1000

ՀՀ Ազգային գրադարան
NL1475320

11
15913

ՍԵՒ ԾՈՎ
BLACK SEA
Բաթում
Batum
Տրապիզոն
Trebizond
Կարս
Kars
Ս. Հ
Ս. Յ
Սեբաստիա (Սիվաս)
Sebastia (Sivas)
Էրզրում (Գարին)
Erzerum (Karin)
ARM
ԹՈՒՐՔԻԱ
Խարբերդ (Ելազիգ)
Kharberd (Elezig)
TURKEY
Բիթլիս (Պաղէշ)
Bitlis (Baglesh)
Տիարբեքիր (Ամիտ)
Diarbekir (Amid)
ISBN 978-164516443-2
9 781645 164432
ՔՈՒՐՏԻՍՏԱՆ
KURDISTAN
ՍՈՒՐԻԱ
SYRIA